





19 NOV 2017

Բանաստեղոր Մաշաւ ՀԱՅՈՒԹՈՒՄ ՅԱԿԻՆ

ԿՍՊՈՒՅՉԻՆ



ԴՈՒԲՐՈՎԱԿԻ

Պատման Հրայրականություն 1937 Յեղաց

B91.71  
2-97

22 JUN 2001

ՊՈՒՏՅՆԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. Ա. ԳՈՒՇԿԻ

# ԴՐԻ ԲՐՈՎ, ՍԿԻ

ՅԵՐՐՈՐԴ ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

13080

891.41  
7-97

ԱՐ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ԳԼՈՒԽ 1

Սրանից մի քանի տարի առաջ իր կալվածներից մեկում առլրում եր սուս հին աղնվական կիրիլա Պետրովիչ Տրոյեկուրովը : Նրա հարստությունը, հոչակավոր տոհմը և կապերը նրան մեծ կշիռ ելին տալիս այն նահանգներում, ուր գտնվում եր նրա կալվածքը : Հարեւաններն ուրախությամբ բավարարում ելին նրա տմանաչքին քմահաճուրքները . նահանգական ստորհանավորները դողում ելին նրա անունը լսելիս . կիրիլա Պետրովիչն ստորագարչության նշաններն ընդունում եր վորպես պատշաճ տուրք . նրա տունը միւս լիքն եր հյուրերով, վորոնք պատրաստ ելին ուրախալի դարձնել նրա աղայական պարագությունը, մասնակցելով նրա աղմկալից, յերեմն ել մոլի զվարճություններին : Վոչ վոք չեր հանդգնում մերժել նրա հրավերները, կամ վորոչ որեր չերկարանու Պոկրովսկոյե գյուղը՝ պատշաճ հարգանք մատուցելու : Ընտանեկան կենցաղում կիրիլա Պետրովիչը ցույց եր տալիս անուս մարդու բոլոր արատները :

Յերես առած այն բոլորից, ինչով նա Մըջապատված եր, նա սովորել եր աղաստ առարկեզ տալ իր կրակոտ բնավորության բոլոր մզումներին և բավական աահմանափակ խելքի բոլոր մտադրություններին : Զնայելով Փիղիկական ունակությունների արտասովոր ուժին, նա շարօթը յերկու անդամ տասապում եր շատակերությունից և ամեն յերեկո խմած եր լինում : Նրա տանը կից շենքերից մեկում ապրում ելին 16 սպասուհիներ, վորոնք սրարապում ելին իրենց սեռին հասուկ ձեռագործով : Այդ շենքի լուսամուտները պատած ելին վայտե վանդակով . դաները վակված ելին կողպեքներով, վորոնց բանալիները գտնվում ելին կիրիլա Պետրովիչի մոտ : Յերկատարդ մենակեցուհիները վորոշու



1630

38

ժամերին իջնում ելին պարտեղ և ման ելին դալիս յերկու պառավիների հակողության տակ : Ժամանակ առ ժամանակ կիրիլա Պետրովիչը նրանցից վոմանց մարդու յեր տալիս և նրանց փոխարեն ընդունվում ելին նորերը :

Գյուղացիների և սպասարկուների հետ նա վարվում եր խիստ և քմահած . չնայած դրան սրանք նվիրված ելին նրան . սրանք սպածենում ելին իրենց տիրոջ հարստությամբ ու վառքով և իրենց հերթին իրենց շատ բան ելին թույլ տալիս հարեւանների նկատմամբ , հույս ունենալով ուժեղ պաշտպանության վրա :

Տրոյեկուրովի մշտական զբաղմունքն այն եր , վոր ըրջարայում եր իր լընդարձակ կալվածներում , անձնաւրվում յերկարատեւ խրախնամների ու նման գեղքելում ամեն որ չնարվող չարածնիունների , վորոնց զոհ եր լինում սովորաբար վորեն մի նոր ծանոթ , թեղետ հին բարեկամներն ել միշտ չելին խուսափում դրանից , բացառությամբ միայն Անդրեյ Գավրիլովիչը Դուքրովիկու : Այս Դուքրովիկին , գվարդիայի պաշտոնաթող պորուչիկը , նրա ամենամտու հարեւանն եր և ուներ յոթանասուն նորտ : Տրոյեկուրովի , վոր իրեն զոռող եր պահում ամենաբարձր կոչումն ունեցող մարդկանց հետ , հարդում եր Դուքրովիկուն , չնայելով վերջինիս համեստ կարողությանը : Մի ժամանակ նրանք ծառայել ելին միասին , և Տրոյեկուրովը վորդից զիտեր , վոր նա ընալուրությամբ անհամբեր և և վճռական : Դեպքերը յերկար ժամանակով բաժանեցին նրանց : Դուքրովիկին , վորի հարստությունը ըստ բաժանեցիլ եր , ստիպված յեղավ պաշտոնաթող լինել և բնակել մնացած<sup>1</sup> գյուղում : Կիրիլա Պետրովիչն իմանալով այդ , նրան առաջարկում եր իր հովանակորությունը , բայց Դուքրովիկին չնորհակալություն հայտնեց և մնաց աղքատ ու անկախ : Մի քանի տարուց հետո պաշտոնաթող զեներալ - անշեֆ<sup>2</sup> Տրոյեկուրովը ժամանեց իր կալվածքը , նրանք հանդիպեցին և ուրախացան դրա համար : Այդ ժամանակներից սկսած՝ նրանք ամեն որ լինում ելին միասին , և Կիրիլա Պետրովիչը , վոր իր ամբողջ կյանքում մոչ վորքի չեր արժանացնում իր այցելությանը , առանց այլքայլության համախում եր իր հին ընկերոջ տնակը : Լինելով հասակակիցներ , միենույն դասի ծնունդ , միատեսակ դաստիա-

1 Այսինքն իր ձեռքում մնացած չծախված գյուղում :

2 Պետրալանչեֆ — գեներալի լրիդ աստիճանը :

բակված , նրանք մասամբ նմանվում ելին նաև բնավորությամբ ու հակումներով : Նրանց յերկուակի բախտն ել վորոշչ չափով միաստակ եր , յերկուան ել այլբելով ելին ամունացել , յերկուան ել շուտով այրիացել ելին և յերկուան ել ունելին մեկական զավակ : Դուքրովիկու վորդին ուսամում եր Պետերբուրգում , Կիրիլա Պետրովիչի աղջիկը ծնողների աչքի առաջ եր մեծանում և Տրոյեկուրովը հաճախ ասում եր Դուքրովիկուն . «Լաիր , յեղբայր , Անդրեյ՝ Գավրիլովիչ , յեթե քո Վալտեկան մարդ դառնա , Մաշայիս կտամ նրան , ի՞նչ արած , վոր նա աղքատ ե» : Անդրեյ Գավրիլովիչը գլուխ պատրիարք սպասարկանում . — «Վո՞չ , Կիրիլա Պետրովիչ , իմ Վալտեկան Մարիա Կիրիլովնայի փեսացուն չի կարող մինչեւ : Ավելի լավ ե , վոր նրա միևն աղքատ աղնվականն ամուսնանա աղքատ աղնվականունու հետ և տան մեծը լինի , քան թե դառնա յերես առած կոնչ գործակատարը» :

Բոլորը նախանձում ելին այն համերաշխությանը , վոր թագավորում եր գոսող Տրոյեկուրովի և նրա աղքատ հարեւանի մեջեւ , և գարմանում ելին վերջինիս համարձակության վրա , յերբ չեւ , և գարմանում ելին վերջինիս համարձակության վրա , սեղան նստած , ուղղակի արտահայտում եր կարծիքը , առանց մտածելու այն մասին , թե այդ չե՞ր հակասի արդյոք տանտերոջ կարծիքին : Մի քանիսը փորձում ելին նմանիկը նրան և զուրս գալ պատշաճ հնագանդության սահմաններից , բայց Կիրիլա Պետրովիչն այնպես վախեցրեց նրանց , վոր առմիջու հրաժարվեցին նման փորձերից , և միայն Դուքրովիկին դուրս մնաց ընդհանուր որենքից : Սակայն անսպասելի մի գեղագ տակն ու վրա արալ ու փոխեց ամեն ինչ :

Մի անգամ , անգան սկզբին , Կիրիլա Պետրովիչը պատրաստվեց վորսի զնալ : Նախընթաց որը հրաման տվեց չնապահներին և ասպանդակառաներին , վոր առավոտյան ժամը հնդին սպասարանու լինեն : Վրանն ու խոհանոցը վաղորոք ուղարկվեցին այնուամենացիւքությունունու յերերու առաջարկությունը : Վայեղ եր գտնվում նաև հիվանդ շների բուժարանը և անկելանոցը , վորտեղ չներին բուժում եր

1 Շնապան — վորսի չներին հսկող :

ավագ բժիշկ Տիմոչկան, և այն բաժանմունքը, ուր ազնվացեղ շնորշ ցնկում ելին և կերպակում իրենց լակումներին: Կիրիլա Պետրովիչը հոգարտանում եր այս սքանչելի հիմնարկով և յերբեք առիթը բաց չեր թողնում նրանով սրածենալու իր հյուրերի առաջ, վրոնցից յուրաքանչյուրմ առնվազն մի քանի անդամ տեսած Ալիներ այդ հիմնարկը: Կիրիլա Պետրովիչը, իր հյուրերով ըրջապատված, Տիմոչկայի և դիմավոր շնապահների ուղեկցությամբ շրջում եր շնանցում, կամու եր առնում մի քանի վորջի առաջ, մերթ հարցնելով հիմանդ չների դրության մասին, մերթ շատ թե քիչ խիստ ու արդարացի նկատողություններ անելով, մերթ կամնելով ծանոթ չներին և փաղաքչանքով խոսելով նրանց հետ: Հյուրերն իրենց պարտականությունն ելին համարում դմայլվել Կիրիլա Պետրովիչը շնանցով: Միայն Դուբրովսկին եր լուսում և նոթերը կիսում: Նա մոլեռանդ վորսորդ եր: Նրա կարողությունը թույլ եր տալիս պահել միայն յերկու քերծե և մի դույդ բարակներ: Այս փառահեղ հիմնարկը տեսնելիս նա չեր կարողանում գերծ մնալ վորոշ նախաճից:

— Ինչո՞ւ յես նոթերդ կիսել, յեղբայր, — հարցրեց նրան Կիրիլա Պետրովիչը, — թե՞ իմ շնանցը քեզ դուք չի դալիս:

— Կո՛չ, — պատասխանեց նա խստահիտ, — շնանցը հրաշալի յե, հաղիս թե այստեղ ձեր մարդիկ ապրեն այնպես, ինչպես ձեր շները:

Շնապահներից մեկը վիրավորվեց:

— Աստծո և աղայի շնորհիս, — ասաց նա, — մենք մեր կյանքից չենք գանգատվում. բայց ինչ վոր ճիշտ ե, ճիշտ ե, — կա այնպիսի արնվական, վորը վաս չեր անի, յեթե իր ապարակը փոխարիներ այստեղի մի վորեւե վորջով: Լավ կիշտանար ու տեղն ել տաք կլիներ:

Կիրիլա Պետրովիչը բարձր ծիծաղեց իր ճորտի այս հանդուգն նկատողության վրա. նրան հետևելով՝ հյուրերն ել հրհուցին, թեև զգում ելին, վոր շնապահի կատակը կարտող ե իրենց ել վերաբերել: Դուբրովսկին գունատվեց ու վոչ մի խոսք չասաց:

Այդ ժամանակ Կիրիլա Պետրովիչին մատուցեցին մի կողով, վորի մեջ գտնվում ելին նորածին լակուոները: Նա զբաղվեց նրանցով: Իր համար ընտրեց յերկուսին, հրամայեց մյուսներին ջուրը նետել ու վեղդել: Մյուս այս, Անդրեյ Գալրիլովիչն անհայտացավ և վոչ վոր այդ շնկատեց:

Հյուրերի հետ վերադառնալով շնանցի բակից, Կիրիլա Պետրովիչը նստեց ընթրիքի և միայն այստեղ, չտեսնելով Դուբրովսկուն, զբաղված լուսերով: Սպասավորները պատասխանեցին, վոր Անդրեյ Գալրիլովիչը տուն և վերադարձել: Տրոյեկուրովը հրամայեց խակույն հասնել նրա յետերից ու անպայման յետ բերել: Իր վորչ կյանքում նա վորսի չեր գնացել առանց Դուբրովսկու, վորը շան արժանիքները դնահատելու վորք ու ճաշակ տւներ և անսխալ ըուծում եր տալիս վորորդական ամեն տեսակի վեճերին: Նրա հետեւից դնացած ծառան վերադարձավ այն ժամանակ, յերբ ընթրիքը շարունակվում եր, և իր տիրոջը գեկուցեց, վոր իրը թե Անդրեյ Գալրիլովիչը չի հնապանդել և չի ցանկացել վերադառնալ: Կիրիլա Պետրովիչը, վորի կատարը ըստ սովորության տաքացած եր մրգելենից պատրաստված ողուց, բարկացավ և նույն սպասավորին յերկուորդ անգամ ուղարկեց Անդրեյ Գալրիլովիչին ասելու, վոր յեթե նա խկույն չփա Պոկրովսկոյե գիշերելու, ապա ինքը, Տրոյեկուրովն ընդմիշտ կմոռի նրանից: Սպասավորը նորից ձի նստեց ու գնաց: Կիրիլա Պետրովիչը սեղանից վեր կացավ, հյուրերին աղասեց և գնաց քնելու:

Հետեւյալ որը նրա առաջին հարցը յեղավ այստեղ և Անդրեյ Գալրիլովիչը: Պատասխանի փոխարին նրան տվին յետանկույնածե ծալած մի նամակ: Կիրիլա Պետրովիչն իր գրադրին հրամայեց բարձր կարդալ և լսեց հետեւյալ.

«Ամենալողորմանց իմ պարտն,

Յես մտադիր չեմ գալու Պոկրովսկոյե, մինչև վոր դուք ինձ մտա չուղարկեք շնապահ Պարամովսկային՝ իր մեղքը խոսուովանելու. կպատժեմ նրան, թե կներեմ, այդ իմ կամքն ե, իսկ յես մտադիր չեմ տանել ձեր ստրովկների կատակները, ձեր կատակներին ել չեմ տանի, վորովհետեւ յես խեղկատակ չեմ, այլ հիմա պղնիական: Մնամ ձեղ խոնարհաբար ծառայություն մատուցող՝ Անդրեյ Դուբրովսկոյի»:

Ետիկետի վերաբերյալ այժմյան հասկացողություններով այս նամակը խիստ անքաղաքավարի կհամարվեր, բայց այն Կիրիլա

1 Կտիկետ — պալատական, արխատոկրատ-ազնվական հասարակության մեջ ընդունված վարքի կարգ ու կանոնները:

— Զերդ գերազանցություն, յեթե վերևե վաստաթուղթ կամ, կամ...

— Ի՞նչ ես դուքս տալիս, բարեկամ. վաստաթուղթու վո՞րն է : Դրա համար հրովարտակներ<sup>1</sup> կամ : Հենց ուժն ել այն ե, վոր առանց վորեւ իրավունքի խլենք կարլածքը : Բայց սպասիր : Այդ կարլածքը մի ժամանակ մեղ ե սպասկանել, դնվել ե ինչ վոր Սպիցինից և հետո վաճառվել Դուքը ուկու հորը : Զի՞ կարելի սրամից մի բան դուքս բերել :

— Դժվար ե, ձերդ գերազանցություն, յերեւի վաճառքը տեղի յե ունեցել որինական կարգով :

— Լալ մտածիր, բարեկամ, զոի՞ր հնարը :

— Յեթե, որինակի համար, ձերդ գերազանցությունը կարողանար ձեր հարեւանից մի կերպ ձեռք բերել այն թուղթը, վորով նա տիրուամ ե իր կարլածքին, ապա իհարկե...

— Հասկանուամ եմ, բայց դժբախտաբար նրա բոլոր թղթերն այրվել են հրդեհի ժամանակ :

— Ինչպես, ձերդ գերազանցություն, նրա թղթերն այրվել են . ե՛հ, դրանից ել ըստ բա՞ն, վոր այդպիս ե, հանեցեք վարդել որենքով. անկատկած կատարելապես բավարարություն կըստանաք :

— Դու կարծո՞ւմ ես . ե՛հ, տե՞ս, յես հույս եմ դնուամ քո ջանադրության վրա, կարող ես հավատացած լինել, վոր կարծանանա իմ շնորհակալության :

Շաբաշկինը դլուխը խոնարհեց համարյա մինչև գետին, դուքս յեկալ և հենց ուույն որվանից սկսեց դրաղվել այդ գործով և, նրա ճարպիկության շնորհիվ, ուղիղ յերկու շաբաթ հետո Դուքը վակին քաղաքից ստացավ մի գործություն, վորով պահանջվում եր անհապաղ բացատրություն ներկայացնել, թե ի՞նչ հիմունքով ե տիրուամ կիստենեկային :

Անդրեյ Գավրիլովիչը, անսպասելի հարցումից առշամած, նույն ուլարկեց քավական կոպիտ մի պատասխան, վորով հայտնեց, թե կիստենեկա գյուղը նրան մնացել ե հանդույշյալ ծնողի մահից հետո, վոր այդ դյուղին նա տիրուամ ե ժառանգականության իրավունքով, վոր Տրոյեկուրովը նրա հետ վոչ մի գործ

1 Հրավարտակ — թագավորի կողմից կամ նրա անունից որպահ գրամքը հրաման, կարգադրություն :

շունի և վոր նրա այս սեփականության նկատմամբ ամեն մի կողմնակի պահանջ ամբաստանություն և ու սրիկայություն :

Այս նստմակը խիստ հաճելի տպավորություն թողեց ատենակալ Շաբաշկինի վրա, — նա համոզվեց, վոր նախ՝ Դուքը ովկավին գործերից շատ քիչ բան դիմե և յերկրորդ՝ դժվար չի լինի այդպիսի տաքարյուն ու անշրջահայաց մարդուն ամենաաննպաստության մեջ գնել :

Անդրեյ Գավրիլովիչը, սառնասիրտ իերալով քննելով ատենակալի հարցումները՝ տեսավ, վոր անհարժեշտ ե ավելի մասնամասն պատասխանել : Նա գրեց բավական գործնական մի թուղթ, վորը սակայն հետազայում անբավարար համարվեց :

Գործն ակսեց ձգձգվել : Հավատացած լինելով, վոր ինքնիրավացի յե, Անդրեյ Գավրիլովիչը շատ չեր անհանդատանում, վոչ ցանկություն, վոչ ել հնարակովորություն ուներ փող ջպրտել իր շուրջը, ու թեև պատահուամ եր, վոր նա միշտ առաջնան եր թանաքային ցեղի<sup>1</sup> վաճառվող խիղճը ծաղրուամ, բայց նրա մըսքուն ել չեր անցնուամ, վոր կարող ե ամբաստանության զոհ լինել : Իր հերթին Տրոյեկուրովը նույնական քիչ եր հոգուամ իր հնարած գործից շահելու մասին — Շաբաշկինը գործուամ եր նրա փոխարեն ու նրա անունից, սպասնալով ու կաշառելով դատավորներին և ծուռ ու մուռ մեկնաբանելով այլեայլ հրովարտակները : Մինչ այս, մինչ այն, 18 . . . թվականի փետրվարի 9-ին Դուքը ովկավիկն քաղաքի վոստիկանության միջոցով հրավեր ատացավ ներկայանալու գեմատվոյի դատարանը<sup>2</sup> լսելու նրա վորուածքը — իր՝ պորուչիկ Դուքրովսկու և կեներալ Տրոյեկուրովի գործի վերաբերմամբ վիճելի կարվածքի մասին, և սոորագրելու իր բավարարված կամ չքավարարված լինելը : Նույն որը Դուքրովսկին մեկնեց քաղաք . ճանապարհին նրան հասավ Տրոյեկուրովը : Նրանք հպարտ նայեցին մեկ մեկու, և Դուքրովսկին չարախուի ժպիտ նկատեց իր հակառակորդի դեմքին :

1 Թանաքային ցեղ — այսինքն չինովիկներ, աստիճանավորներ :

2 Զեմստվոյի դատարան — թուաստանուամբ բարենորոգումներից, այսինքն 60-ական թվականներից, առաջ վոտիկանական, հետաքննական ու դատական գավառային մարմին . հիմնվել եր 1775 թվականին : Նա կազմված եր զավականա աղնվականությունից ընտրված զեմստվոյի վոստիկանապետից կամ կապիտան վոստիկանապետից և զեմստվոյի ատենակալներից :

Քաղաք հասնելով, Անդրեյ Գավրիլովիչն իջևանեց ծանոթ գաճառականի մոտ, զիշերեց և հետեւյալ որն առավոտյան ներկայացալ գավառական դատարանի առյանը: Վոչ վոք նրա վրա ուշադրություն չըարձրեց: Նրանից հետո յեկալ Կիրիլա Պետրովիչը գրադիրները վոտի կանգնեցին և փետրագրիչները դրին ականջների յետեւը: Գատարանի անդամները նրան ովհամուշին խորը ստորագրացության արտահայտություններով, բաղկացոս առաջարկեցին, խոնարհվելով նրա աստիճանի, տարիքի և գեր մարմնի առաջ: Նա նստեց: Դատարկան նիստը դռնքաց եր: Անդրեյ Գավրիլովիչը վոտի վրա կանգնած, հենվել եր պատին: Տիրեց խորին լուսություն, և քարտուղարը հնչուն ձայնով սկսեց կարուալ դատարանի վորոշումը:

Մենք ամբողջովին բերում ենք այդ վորոշումը, կարծելով, վոր ամեն մեկի համար հաճելի կլինի տեսնել այն ձեւերից մեկը, վորով Ռուսաստանում մենք կարող ենք զբավել կալվածքից, թեկու և այն տիրելու անվիճելի իրավունք ունենանք:

«18... թվականի փետրվարի 10-ն կ\*\*-ի գավառական դատարանը քննեց գվարդիայի պորուչիկ Անդրեյ Գավրիլի վորդի նուրբության գործը, վորը անհիմն տիրում ե գեներալ-անշեֆ Կիրիլա Պյոտրի վորդի Ֆրոյեկուրովին պատկանող՝ \*\* նահանգի կիստենելիա գյուղը, վորտեղ կա արական սեռի \*\* հոգի և \*\* դեսյատին հող ու մարդագետին: Սույն պործից յերեսում ե, վոր վերոհիշյալ գեներալ-անշեֆ Ֆրոյեկուրովն անցյալ 18... թվականի հունիսի 9-ին առյօն դատարանին խնդիր ներկայացրեց առայն, վոր նրա հանգուցյալ հայրը՝ կոլեժակի ասեսոր<sup>1</sup> և կալվալիք Պյոտր Յեֆիմի վորդի Ֆրոյեկուրովը 17... թվականի ողոսուսի 14-ին, —այն ժամանակ ծառայելով վորպես \*\* վոլխարքայի<sup>2</sup> վարչության գալարային քարտուղար՝ դրամենյակային ծա-

<sup>1</sup> Կոլեժակի ասեսոր — ցարական թուսաստանի պետական ծառայողների աստիճաններից մեկը:

<sup>2</sup> Փոխարքան — այն ժամանակ պետական խոշոր աստիճանավոր՝ հակայական լիազորություններով: Նա կառավարում եր Ռուսաստանի վորուն ծարագանքը (Կովկաս, Հեռավոր արևելք և այլն), վորտեղ նա անսահմանավակ իշխանություն ուներ: Փոխարքային յենթարկվում երին բոլոր կառավարական

ռայող \*\* աղնվական ֆաղեյ Յեգորի վորդի Սալիցինից գնեց սույն կալվածքը, վորը գտնվում եր \*\* շրջանում, վերոհիշյալ կիստենելիա գյուղում, վորպիսի գյուղն այն ժամանակ ըստ ուկիցիայի կոչվում եր կիստենելյան նորագյուղ, վորտեղ ըստ 4-րդ ուկիցիայի կար \*\* հոգի, նրանց ամբողջ գյուղացիական ունեցվածքը, աղարակով, վարելու և այլ հողերով, անտառներով, խոտարքներով, կիստենելիա կոչված գետակի ձկներով և հիշյալ կալվածքին պատկանող բոլոր հողամասերով ու կալվածատիրով վայտե տնով, մի խոսքով՝ ամեն ինչ, վոր նրան ժառանգաբար մնաց իր հոր, աղնվական, ուրյադնիկ Յեգոր Տերենաւիլի վորդի Սպիցինից նրա տիրապետության տակ եր գտնվում, մինչև ամենավերջին մարդը և հոգի ամենավերջին քառորդը<sup>2</sup>, վորը գնահատվեց 2500 ռուբլի և նույն որը \*\* դատ ու դատաստանի պաշտում կայքագիր<sup>3</sup> կազմվեց, և նրա հայրը նույն ժամանակ, ոգոսատոսի 26-ին կ\* զեմաստվոյի գատարանի կողմից հաստատվեց կալվածքը տեր և արձանագրվեց այդ: Վերջապես, 17... թվականի սեպտեմբերի 6-ին նրա հայրը, կամովն աստծո, մեռալ, մինչդեռ նա, ինդրասու գեներալ-անշեֆ Տրոյեկուրովը 17... թվականից, համարյա մանկությունից գտնվում եր զինվորական ծառայության մեջ և մեծ մասամբ մասնակցում եր արտասահմանյան արշավանդներին, ուստի և չեր կարող տեղեկություններ ունենալ թե իր հոր մահվան և թե նրանից հետո մնացած կալվածքի մասին, իսկ այժմ, բոլորվին հեռացած լինելով վերոհիշյալ ծառայությունից և վերադառնալով իր հոր կալվածքները, վորոնք գտնվում են \*\* և \*\* նահանգներում, կ\*\* դ\*\*\* Ռ\*\*\* գավառներում, զանազան գյուղերում, լնկամենը 3000 հոգի, —նա գտնում ե, վոր այդ կալվածների թվում վերոհիշյալ կ\*\* կալվածքին, ուր կա \*\* հոգի (վորոնց թիվն ըստ այժմյան...)

Հիմնարկները, զինվորական ու քաղաքական իշխանություններն ու գորքերը: Փոքր ժողովուրդների նկատմամբ փոխարքայությունը ցարական կառավարության գաղութային կամայականության ձևերից մեկն եր:

1 Ռեվիզիա — XVIII դարում և XIX դարի առաջին կիսում գյուղական ու քաղաքային բնակչության մարդաշամար, վորի նսկատակն եր պարզել ընչահարկի յենթակա բնակչության քանակը:

2 Քառարդը՝ հոգի հին չափ, գեսայտինի քառորդ մասը, —0,72 հեկտար:

3 Կայքագիր — մինչհեղափոխական Ռուսաստանում մի վաստաթուղթ, վոր պահանջվում եր անշարժ կայքը դնելու-վաճառելու համար:

ռեմիլիայի նույն գյուղում նշված է<sup>\*\*</sup> հոգի), և նրա բոլոր հողերին առանց վորես հիմքի տիրում և վերոհիշյալ դվարկիայի պորուչիկ Անդրեյ Դուբրովսկին, այս պատճառով վերոհիշյալ խնդրի հետ ներկայացնելով այն խկական կայքագիրը, վորը նրա հորը տրված և վաճառող Սպիցինի կողմից, խնդրում և յետ վերցնել կալվածքն ապորինի տեր Դուբրովսկուց և տալ ըստ պատճանելիույն, Տրոյեկուրովի լիակատար տրամադրության տակ դնելով այն: Իսկ սույն կալվածքի անարդարացի տիրապետության համար, վորից ստացված յեկամուտներից ոգտվել և նա, այդ մասին պատշաճալոր քննություն կատարելուց հետո, նրանից՝ Դուբրովմկուց գանձել որենքով հասանելիք տույժն և դրանով բավարարել Տրոյեկուրովին:

<sup>\*\*</sup> Պեմտվոյի գատարանի՝ սույն խնդրի վերաբերյալ քննությունից պարզվեց, վոր վերոհիշյալ միմելի կալվածքի այժմյան տեր, դվարդիայի պորուչիկ Դուբրովսկին տեղում աղնական տառենակալին բացատրություն և ավել, վոր ներկայումս նրա տիրած կարվածքը, վոր գտնվում և մատնանշված կիստենեկա գյուղում, 186 հոգով, հողերով և իր բոլոր մասերով իրեն ժառանգություն և մնացել իր հոր, — հետոանու պոդպորուչիկ Գավրիլ Յեղափի վորդի Դուբրովսկու մահից հետո, իսկ նրան հասել և սույն խնդրատուի հորից, նախկին գավառային քարտուղար, հետո կողեժակի ասեսոր Տրոյեկուրովից գնելուց ըստ 17... թվականի ոգոստոսի 30-ին նրա տված հավատարմագրի, վորը վարվերացված ե<sup>\*\*\*</sup> գալվառական դատարանում և տրված և տիրուցյար խորհրդական<sup>1</sup> Գրիգորի Վասիլի վորդի Սորոլենին, վորից նրա հայրը կայքագիր և ստացել, քանի վոր հավատարմագրում առված ե, թե նա, Տրոյեկուրովը, գրասենյակային չինովնիկ Սպիցինից գնած և իրեն հասած կարվածքը 113 հոգով և հողերով ծախել և իր, Դուբրովսկու հորը, և պայմանագրով հասանելիք մողը, 3200 ռուբլի, լրիվ և անվերադարձ ստացել և նրա հորից և խնդրել վերոդրյալ Սորոլենին նրա հորը որինական կայքագիր տալ: Մինչդեռ նրա հայրը նույն հավատարմագրով, ամբողջ զումարը վճարելու պատճառով, առևյուղ դնովի կարվածքին տիրել և տնօրինել և հետագայում, մինչև հիշյալ կայքագիր կաղմելը,

1 Տիտուլյար Խորեգական — ցածր աստիճաններից մեջ, վորոնք ուժը ելին ցարուկան Ռուսաստանի պետական չինովնիկներին:

ինչպես խոկական տեր, և վաճառող Տրոյեկուրովը կամ այլ վոք հետագայում չեյլին կարող խառնվել սույն կալվածքի գործերին: Սակայն այդպիսի կայքագիրը հավատարմատար Սորոլենի կողմից յերբ և վո՞ր ատյանում և տրված նրա հորը, — նրան, Անդրեյ Դուբրովսկուն հայտնի չե, վորովհետու այն ժամանակ նա կատարելավագիս մանուկ եր և իր հոր մահից հետո հիշյալ կայքագիրը չկարողացավ գտնել, այլ յենթադրում և, թե այն կարող և այրված լինել 17... թվականին նրանց տանը պատահած հրդեհի ժամանակ, վորի մասին հայտնի յի յեղել այդ գյուղի մակարդակին: Իսկ, վոր նրանք, Դուբրովսկիներն անոյնինելի կերպով տիրել են սույն կարվածքին, սկսած Տրոյեկուրովի վաճառվուց և կամ Սորոլենի հավատարմագիր տալուց, այսինքն 17... թվականից, իսկ հոր մահից հետո՝ 17... թվականից, մինչև հիմա, այդ կարող են վկայել այնտեղի բնակիչները, վո՞րնչեալ մարդ, հարցաքննության ժամանակ յերգիբոնք, ընդամենը 52 մարդ, հարցաքննության ժամանակ յերգիբոնք, վոր իսկապես, վերոդրյալ վիճելի կարվածքին ուղել են տիրանալ հիշյալ պարոնայք Դուբրովսկիները գեռ 70 սկսել են տիրանալ հիշյալ պարոնայք Դուբրովսկիները գեռ 70 տարի առաջ, առանց վորես մեկի կողմից վեճ հարուցվելու, քայլ թե ի՞նչ արձանագրության կամ կայքագրի հիման վրա եյին տիրում, — նրանց հայտնի չե: Իսկ սույն գործում հիշված, նախակարգի տունը, նրանք չեն հիշում: Պարոնայք Դուբրովսկիների տունը արանից 30 տարի առաջ, գիշերը նրանց կարվածքում պատահած հրդեհից այլովել և, ընդվորում կողմնակի մարդիկ պատահական քարտուղար Պյոտր Տրոյեկուրովը տեր և յեղել կին գալվառական քարտուղար Պյոտր Տրոյեկուրովը տեր և յեղել կարվածքին թե վոչ, նրանք չեն հիշում: Պարոնայք Դուբրովսկիների տունը արանից 30 տարի առաջ, գիշերը նրանց կարվածքում պատահած հրդեհից այլովել և, ընդվորում կողմնակի մարդիկ պատահած հասանական քարտուղարին, թե վերոհիշյալ վիճելի կարվածքն այն ժամանակակի կամաց սկսած, տարեկան կարող եր տալ վոչ պակաս քան 2000 ռուբլի:

Սրան հակառակ, գեներալ-անշեֆ Կիրիլա Պյոտրի վորդի Տրոյեկուրովը, սույն թվականի հունվարի 3-ին ներկա դատարանին ինդրագիր ներկայացրեց, վոր թեև վերոհիշյալ դվարդիայի պորուչիկ Անդրեյ Դուբրովսկին ներկա գործի քննության ժամանակ ներկայացրեց եր իր հանդուցյալ հոր կողմից տիրուցյար խորհրդական Սորոլենին տրված հավատարմագրի՝ իրեն ծախված կարվածքի վերաբերյալ, սակայն վոչ միայն իսկական կայքագրի մինչեւ, այլև այլպիսին յերբեք կնքվելու մասին վոչ մի պարզ առկացույց չե ներկայացրել ըստ դիմավոր ուղղամհնուի 19-րդ դասի և ըստ 1752 թվականի նոյեմբերի 29-ի Տրոյեկուրակի: Հե-

գրությամբ իրենց գոհությունը կամ դժոհությունը հաստատելու:

Վորապիսի վորոշումն ստորագրեցին դատարանում բոլոր ներկա դժողովուները —

Քարտուղարը լոեց, ատենակալը վեր կացավ և գլուխը խոնարհելով դիմեց Տրոյեկուրովին, հրավիրելով ստորագրել առաջարկած թուղթը, և հաղթանակը տարած Տրոյեկուրովը, գրիչը վերցնելով նրանից, կատարյալ բավարանությամբ ստորագրեց դատարանի վորոշումը:

Հերթը հասավ Դուբրովսկուն: Քարտուղարը թուղթը մատուցեց նրան: Բայց Դուբրովսկին կանգնած եր անշարժ ու գլուխակոր:

Քարտուղարը կրկնեց իր դիմումը, — ստորագրելով հաստատել եր կատարյալ գոհությունը կամ դժոհությունը, յեթե նա կարծում ե, վոր արդար ե իր գործը և մտադիր ե որենքով վորոշված ժամանակում ուր հարկն ե վերադատության դիմում տալ:

Դուբրովսկին լուսմ եր... Հանկարծ նա գլուխը բարձրացրեց, աչքերը կայծկլուցին, նա վոտը խիեց հատակին, քարտուղարին հրեց այնպես ուժեղ, վոր նա վայր ընկալ, ասկա վերցնելով թանաքամանը, շպրտեց ատենակալի վրա: Բոլորը սարսափեցին: «Ինչպէս, չհարգել աստծո տաճարը. կորի՛ր, դյաղակիցեղ»: Դուբրովսկին դիմեց Կիրիլա Պետրովիչին. «Լովա՞ծ բանե, ձերդ գերազանցություն, — չարունակեց նա, — շնապահները չներին տանում են աստծո տաճարը, չները վաղվզում են տաճարում: Յես ձեզ ցույց կտամ...» Աղմուկից ներս վաղեցին աղածակները և հաղիվ հաղ զսպեցին Դուբրովսկուն: Վերջնիս դուրս տարան ու նստեցրին սահնակ: Տրոյեկուրովը դուրս յեկավ նրա յետելից ամրող դատարանի ուղեկցությամբ: Դուբրովսկուն հանկարծակի խելազարությունը սաստիկ ազդեց նրա յերեակայության վրա և թունավորեց նրա հաղթանակը: Դատավորները, վորոնք հույս ունեյին, թե նա չնորհակալ կլինի, չարժանացան նրա և վոչ մի քաղցր խոսքին: Նույն որը նա մեկնեց Պոկրովսկուն: Մինչ այս մինչ այն, Դուբրովսկին պառկած եր անկողնում: Գավառական բժիշկը, վորը բարերախտարար բոլորովին տղետ

չեր, աղբուկներ<sup>1</sup> ու խարածճիներ<sup>2</sup> դնելով կարողացավ արյուն առնել նրանից: Յերեկոյան թեթևացավ հիվանդի դրությունը, նա ուշքի յեկավ: Հետեւալ որը Դուբրովսկուն տարան կիստենեկա, վոր արդեն համարյա չեր պատկանում նրան:

### ԳԼՈՒԽ III

Անցավ վորոշ ժամանակ, բայց խեղճ Դուբրովսկու տոռդշությունը գեռ վատ եր: Ճիշտ ե՝ խելազարության նշանները չեյին վերսկսվում, սակայն նրա ուժերը նկատելի կերպով նվազում եյին: Նա մոռացության եր տվել իր նախկին զբաղմունքները, քիչ եր դուրս գալիս սենյակից և ամբողջ որերով մտածում եր ու մտածում: Յեղորովնան, — մի բարի պառավ, վորը մի ժամանակ ինսամում եր նրա վորդուն, հիմա նրա համար ել դայակ դարձավ: Պառավը խնամում եր նրան ինչպես յերեխայի, հիշեցնում եր ուտեկու և քնելու ժամանակը, կերակրում, պանկեցնում եր քնելու: Անդրեյ Գավրիլովիչն անխոս հնազանդում եր և նրանից բացի հարաբերություն չուներ վոչ վոքի հետ: Դուբրովսկին ի վիճակի չեր իր գործերի մասին մտածելու, տնտեսական կարգադրություններ անելու, ու Յեղորովնան համոզվեց, վոր անհրաժեշտ ե այդ բոլորը հայտնել յերիտասարդ Դուբրովսկուն, վորը ծառայում եր այն ժամանակ Պետերբուրգում զրտնվող գվարդիական հետեւակ գնդերից մեկում: Այսպես, ծախսերի մատյանից պոկելով մի թերթ, Յեղորովնան խօհարար Խարիտոնին—Կիստենեկայի միակ զրագետին—թելադրեց իր ծրագրած նամակը և նույն որն ուղարկեց քաղաքի փոստը:

Սակայն ժամանակ ե ընթերցողին ծանոթացնել միակին խական հերոսի հետ:

Վլադիմիր Դուբրովսկին դաստիարակվեց կարետների կոր-

1 Տգրուկ — ճիճուների մի տեսակը: Այսպես կոչված՝ բռժական տըղուկներն ոգտագործվում են որպանիզմից փոքր քանակությունից արյուն առնելու համար: Յուրաքանչյուր աղբուկ կարող է ծծել 16 մլ արյուն: Տգրուկներն ոգտագործվում են ուղեղի արյունակալման և այլ հիվանդությունների դեմ:

2 Խարանմի — փոքրիկ բղեղ: Զորացրած խարաճիկց պատրաստվում ե պեղանին, վորը դործ և ածվում հիվանդությունները բուժելու ժամանակ:

պուտում և ավարտեց իբրև գլարդիայի կորնես<sup>2</sup>։ Հայը վոչինչ  
շեր խնայում իր վորդուն վայելու պահելու համար, և յերիտա-  
ռարդը տանից ստանում եր ավելի, քան պետք և սպառեր։ Լի-  
նելով չույլ ու փառասեր՝ նա իրեն թույլ եր տալիս փարթամ  
քմահաճություններ—թուղթ եր խաղում և պարտք եր անում,  
չմտածելով ապագայի մասին և նախատեսելով, վոր վաղ թե ուշ  
պիտի գտնի մի հարուստ հարսնացու—աղքատ յերիտասարդի յե-  
րազվ։

Մի անգամ, յերեկոյան, յերբ ուր քասր ուղարձակ է առ այս մոտ, բազկաթոռների վրա մեկնված, և ծխում ելին նըա սաթի ծխափողերից, Գրիշան, նրա կամերդիլները<sup>3</sup> մատուցեց մի նամակ, վորի մակարը ըրությունն ու կնիքն իսկույն զարմացրեն յերիտասարդին: Նա շտապ բացեց ծրաբն ու կարդաց հետեւյալը.

«Դու մեր տեր վաղինիքը Անդրբյուլիչ, յան քո ուշաց  
գայակը, վորոշեցի քեզ գեկուցել հայրիկիդ առողջության մա-  
սին։ Նա շատ վատ դրության մեջ է, յերբեմն անմիտ-անմիտ  
խոսում է, և ամբողջ որը նոտած է հիմար յերեխայի պես։ Աս-  
քելն ու չապլիւն աստծու կամքից է կախված։ Սրի՛ մեզ մոտ,  
աղիկ գա՛ռ ջան, մենք քեզ համար կառք կուղարկենք Պետոնո-  
յե։ Լսել ենք, վոր գեմատվոյի դատարանը մեզ մոտ պիտի դա ու-  
ժե։ Լսել ենք, Վետրովիչ Տրոյեկուրովի իշխանության,  
մեզ հանձնի Կիրիլա Պետրովիչ Տրոյեկուրովի իշխանության,  
վորովհետեւ մենք իրը թե նրանն ենք, բայց մենք միշտ ձերն ենք  
վորովհետեւ մենք իրը թե նրանն ենք, բայց մենք միշտ ձերն ենք  
յեղել և իսկի եղ տեսակ բան։ չենք լսել մեր կյանքում։ Դու կա-  
յելք եւ իսկի եղ տեսակ բան։ չենք լսել մեր կյանքում։ Դու կա-  
յելք եւ իսկի Պետրովուրում եղ մասին գեկուցել հայր Թագավոր-  
ուող եյթը. Պետերբուրում եղ մասին գեկուցել հայր Թագավոր-  
ուող եյթը. Պետերբուրում եղ մասին գեկուցել հայր Թագավոր-  
ուող եյթը. Պետերբուրում եղ մասին գեկուցել հայր Թագավոր-  
ուող եյթը.

Արինա Յեղորովնա Բուլիբյովա»  
Իմ մայրական որհնությունն եմ ուղարկում Գրիշային, ար-  
դյուք լա՞վ ե ծառայում քեզ: Մեզ մոտ այս յերկրորդ շաբաթն  
է, վոր անձրես ե գալիս և հովիդ Ռոդյան մեռավ Միկոլի ուժա-  
մուեքը:

1 Կաղենութիւն կորպուս անսովոր հուզմունքով և լըստր  
ռահան գորոց, վորտեղ սպա ժամանակու համար սովորում ելին պլավորապես  
առանելի յերեխան եք:

2 Կորնել — շարական բանակի հեծելազորի սպայակամ առաջ՝  
ճան, վոր համապատասխան եր հետեւազորի սպազորուչիկի տափանին;  
3 Կամերդիկեր (գերմ.) — ծառա, սպասավոր:

գառ կարգաց այս բավական տարորինակ տողերը։ Մանուկ որեց նա զրկվեց մորից և հորն ել զբեթե չճանաչելով, 8 տարեկան հասակում ուղարկվեց Պետքը բուրդ։ Այնուամենայնիվ նա ջերմ սիրում եր հորը, ընտանեկան կյանքը սիրում եր այնքան, վորքան դեռ չեր կարողացել զգալ այդ կյանքի խաղաղ ուրախությունը։

Իր հորը կորցնելու միտքը մաշում եր նրա սիրտը, խակ խեղճ  
հիմանդի վիճակը, վոր նա դուշակում եր դայակի նամակից,  
սարսափ եր աղջում նրա վրա: Նա յերեսակայում եր, թե ինչպես  
իր հայրը գտնվում է դյուսդում, հիմար պառակի ու սպասարկոր-  
ների խնամքի տակ, ինչ-վոր փուլծության մատնված, մարում և  
անող, մարմնաւկան ու հոգեկան տանջանքների մեջ: Վլադիմիրը  
կշտամբում եր ինքն իրեն, վոր հանցավոր անտարբերություն և  
ցույց տվել: Յերկար ժամանակ հորից վոչ մի լուր չեր ստացել և  
չեր ե՛լ մտածում տեղեկանալ, յենթադրելով, թե նա շրջագայում  
և կամ անտեսաւկան հոգսերով ե զբաղված:

Նա վորոշեց գնալ հոր մոտ և նույնիսկ պաշտոնաթող լինել,  
յեթե հոր հիվանդութ վիճակը պահանջի իր ներկայությունը:  
Նկատելով նրա անհանդպատճյունը, ընկերները հեռացան: Վլա-  
գիմիրը, մենակ մնալով, արձակուրդ ստանալու դիմում ուրեց,  
ականջ ծխել և խորասուրվեց մտքերի մեջ:

Նույն որը նա սկսեց հոգալ արձակուրդի մասին և Ձ որից  
հսկող նա արդին ճանաչարհ ընկալ իր հայլատարիս Դրիշայի  
հետ:

Վլադիմիր Անդրեևիչը մոտենում եր այն կայարանին, վորտեղից ճանապարհը ծոելու յեր դեպի Կիստենևկա: Նրա սիրութիքն եր տիսուր նախագլուխումներով, նա վախենում եր, թե հորը կենդանի չէ տեսնի, նա յերեւակայում եր այն կյանքի տիսուր պատկերը, վոր գյուղում սպասում եր իրեն, —իոռու, սակավաբարդ անկյուն, աղքատություն և այնպիսի գործերի հոգս, վորոնցից նա վոչինչ չեր հասկանում: Հասնելով կայարան, նա մտավ կայարանապետի մոտ և հարցրեց, թե չկա՞ արդյոք մասնավոր կառուք<sup>1</sup>: Կայարանապետն իմացավ, թե նա ուր և ուղարկ

1 Մինչեւ յերկաթուղիների յերևան գալը մարդիկ կառքերով ելին ճանապարհորդութեամբ: Ճեռավոր ճանապարհորդությունները լինում ելին մի քանեական ձիերով ու կառքերով, փորոնք փոխվում ելին յուրաքանչյուր կայտարանում և մասնավոր կառքերով, վորոնց ճանապարհորդը վարձութիւն աղատ գներով:

զնալ և հայտարարեց, թե արդեն չորրորդ որն ե, ինչ նրան սպառում է կիստենեկայից ուղարկված կառքը: Շուտով Վլադիմիր Անդրեևիչի մոտ յեկալ ծերունի կառապան Անտոնը, վորը մի ժամանակ նրան տանում ու ցույց եր տալիս ախոռը և խնամում նրա վոքրիկ ձիուն: Տեսնելով նրան, Անտոնն արտասկեց, ուղուիր խոնարհեց մինչև գետին, ասաց, թե իր ծերունի աղանդենդանի յե, և վաղեց ձիերը լծելու: Վլադիմիր Անդրեևիչը հրաժարվեց իրեն առաջարկած նախաճաշից և շտապեց մեկնել: Անտոնը նրան տանում եր դյուղական ճանապարհներով և նրանց միջև խոսակցություն սկսվեց:

— Ասո՞ խնդրեմ, Անտոն, այդ ի՞նչ և պատահել հորո և Տրոյեկուրովի միջև:

— Ե՛ս, սոսված դիտե, հայր Վլադիմիր Անդրեևիչ, աղեն չկաշովեց կիրիա Պետրովիչի հետ, նա ել դործը դատարան չկաշովեց կիրիա Պետրովիչի հետ, նա ել դործը դատարան ել: Դե տվեց ասենք շատ անդամ դատոն ել և ինքը, դատարանն ել: Դե մենք ծառա մարդիկ ենք, մեր դործը չե քննել աղաների գործերը, ամա՛, ասոված վկա, ձեր հերը զուր տեղ դեմ դնաց կիծերը, ամա՛, ասոված վկա, ձեր հերը զուր տեղ դեմ դնաց կիծերը Պետրովիչին: Նրա հետ վո՞նց պիտի չափիվի:

— Ուրեմն այդ կիրիա Պետրովիչն ինչ ուղում, այն ել անո՞ւմ ե:

— Լովա՞ծ բան ե, աղա, նրա համար ատենակալն իսկի մի դուռ ել չարժե դավառական վոստիկանապետին մատոների վրա լուսացնում: աղաները դալիս են նրա մոտ գլուխ խոնարհելու: Հարուստ մարդու բարեկամները շա՞տ:

— Ճի՞շտ ե, վոր նա խլում ե մեր կալվածքը:

— Ո՞ֆ, աղա, հա, եղալես բան ենք լսել: Իս քանի ո՞քը Պոկրովսկոյի ժամկոչը մեր տանուսիրոջ կնունքի ժամանակ Պոկրովսկոյի ժամկոչը մեր առաջարարություն կիրիա Պետրովիչի մասն դաք, շուտով ձեզ կլծի կիրիա Պետրովիչը, վո՞նց կլծի: Պարբին Միկիտան ել ասում ե րիա Պետրովիչը, վո՞նց կլծի: Պարբին Միկիտան ել ասում ե րիա Պետրովիչը, վո՞նց կլծի: Կիրիա Պետրովիչն իրեն համար, Անդրեյ Քեֆին մի՛ դիալչի: Կիրիա Պետրովիչն իրեն համար, մենք բոլորս ել ասածունն ենք Գավրիլովին ել իրեն համար, մենք բոլորս ել ասածունն հու թաղավորինը: ամա ի՞նչ արած, ուրիշի բերանին հո կողակեք ու թաղավորինը: ամա ի՞նչ արած, ուրիշի բերանին հո կողակեք չե՞ս դնի:

— Ուրեմն դուք չե՞ք ցանկանում Տրոյեկուրովի իշխանության տակ անցնել:

— Կիրիա Պետրովիչի իշխանության տա՞կ: Ասոված մի արանցե: Առանց եղ ել նրա մարդկանց դրությունը վատ ե, իսկ յեթե ուրիշի մարդկի անցնեն նրա իրավունքի տակ, նա նրանց կաշին ել կքերթի, միան ել: Զե, թող ասոված յերկար կյանք տա Անդրեյ Գավրիլովիչին, իսկ յեթե ասոված նրան իր մոտ տամնի, են ժամանակ մեղ վոչ վոք հարկավոր չե, բայց քեզնից, մեր բարերարից: Մեկ մի՛ տուր նրան, իսկ մենք սարի պես կիանդնենք քո քամակիին:

Այս խոսքերի վրա Անտոնը բարձրացրեց մտրակը, թափա-Հարեց յերանանները, և նրա ձիերն սկսեցին արագ վաղել:

Զգացվելով ծերունի կառապանի խոսքերից, Դուրբովակին լուց և անձնատուր յեղակ իր մտքերին: Անցավ ալելի քան մի ժամ: Հանկարծ Պրիշան նրան սթափեցրեց, — իրեն Պոկրովսկոյեն, — բացականչությամբ: Դուրբովսկին բարձրացրեց գլուխը. կառքն ընթանում եր ընդարձակ լծի ափով: Լծից սկիզբ եր առ-նում մի գետակ և ոճագալար չքանում եր հեռվում, բլուրների մեջ: Բլուրներից մեկի վրա, սաղարթախտ պուրակում բարձ-րանում եր քարե հսկայական տան կտուրն ու պատշամբը: Մյուս բլուրի վրա՝ յեկեղեցին իր հինդ գմբեթներով ու հնամյա զանգակատնով: Դրանց մոտ ցրված եյին դյուղական խրճիթնե-րը՝ բանջարանցներով ու ջրհորներով: Դուրբովսկին ճանաչեց այս վայրերը, — նա հիշեց, վոր հենց այդ բլուրի վրա նա խաղա-ցել և փոքրիկ Մաշա Տրոյեկուրովայի հետ, վորը յերկու տարով իրենից վոքը եր և գեռ այն ժամանակ նկատվում եր, վոր պետք և գեղեցկուհի դառնա: Դուրբովսկին ուղում եր նրա մասին տե-ղեկություն խմանալ Անտոնից, բայց ինչվոր ամոթխածություն զավեց նրան:

Մոտենալով կալվածատիրոջ տանը, նա այդու ծառերի մեջ նկատեց կանացի սպիտակ շրջադրեստ: Այդ ժամանակ Անտոնը մտրակից ձիերին և վո՞չ առանց հպարտության, վորը հատուկ ե թե գյուղական և թե առհասարակ այլ կառապաններին, արտ-զությունը անցավ կամուրջն ու սլացավ գյուղի մոտով: Դուրս գալով գյուղից, նրանք բարձրացան սարը, և Վլադիմիրը տեսավ կեչների պուրակն ու նրանից դեպի ձախ, բաց դաշտում — գոր-շավուն մի տնակ՝ կարմիր տանիքով: Նրա սիրտն սկսեց արագ խորել — նա տեսավ կիստենելիկան և իր հոր անշուրք տունը:

10 բողեյից հետո նա մտավ այդ տան բակը։ Աննկարա-  
դրելի հուղմունքով գիտում եր շուրջը։ Տասներկու տարի իր,  
հայրենիքը չեր տեսել։ Կեչիները, վոր նրա այստեղ գտնված  
ժամանակ նոր եյին տնկվել ցանկապատի մոտ, աճել եյին ու  
դարձել բարձր, ճյուղավոր ծառեր։ Բակը, վոր մի ժամանակ  
զարդարված եր յերեք համաշտի ծաղկանոցներով, խել որանց  
միջն լայն ճանապարհ եր բացված, վորը մաքրվում եր խնամ-  
քով, — հիմա դարձել եր չհնձվող մարդագետին, վորտեղ մի կա-  
պած ձի յեր արածում։ Շներն սկսեցին հաջել, բայց ճանաչելով  
Անտոնին, լուցին ու սկսեցին շարժել բրդոտ պոչերը։ Սուսա-  
վորները դուրս թափվեցին իրենց խրճիթներից և ուրախ բա-  
ցականչություններով շրջապատեցին յերիտասարդ աղային։  
Վերջինս հաղիս դուրս պրծավ ջերմեռանդ ամբոխի միջից և  
վաղեց դեպի խարխուլ տունը։ Սրահում նրան դիմակորեց Յե-  
ղորդվան և լալով գրկեց իր սանին։

— Բարե՛, բարե՛, զայակս, — կրկնում եր նա, իր կրծքին  
սեղմելով բարի պառակին, — Հապա հայրի՞կը, վզրուե՞ղ և նա,  
ինչպէս և նա։

Այդ բողեյին վոաները հաղիս շարժելով դահլիճ մտավ  
բարձրահասակ, դունաստ ու նիհար ծերունին, վորը խալաթ եր  
հաղել։ Գլուխը ծածկել եր թասակով։

— Բարե՛, վարդկա, — առաց նա թույլ ձայնով, և վաղե-  
միքը հուղված գրկեց իր հորը։

Հիմանդը սաստիկ ցնցվեց ուրախությունից, թուլացավ,  
վոռները յերերացին, և նա վայր կընկներ, յեթե վորդին չըռներ  
նրան։

— Ինչո՞ւ վեր կացաք անկողնից, — տոսում եր Յեղորդվան,  
— վոռների վրա չի կարողանում կանգնել, բայց սպասարորի  
պես վաղել և ուղում։

Ծերունուն յետ տարան ննջարան։ Նա ուժ եր անում վոր-  
ու հետ խոսելու, բայց մտքերը խճողվում եյին ուղեղում ու  
բառերը բոլորովին անկալ եյին։ Նա լոեց ու անզգայցավ։ Վը-  
րառերը բոլորովին անկալ եյին։ Վիճակի հանդեպ։ Նա տեղալորվեց ննջա-  
րադիրն ապշեց հոր վիճակի հանդեպ։ Նա տեղալորվեց ննջա-  
րանում և ինդրեց իրեն մենակ թողնել հոր հետ։ Տանեցիք հնա-  
զանդեցին, և այդ ժամանակ դիմեցին Դրիշային, տարան սպա-  
զանդեցին, և այդ ժամանակ դիմեցին Դրիշային, տարան սպա-  
զանդեցին, և անյակը անյակը, հյուրասիրեցին դյուղավարի ու սրաբարյ  
հարցերի ու վողջույնների տարակ թափելով նրա վրա։

Ուր սեղանն եր խորտիկների,  
այստեղ զադաղ և զրված»—այս եղի-  
քափը վերցրած և առ հայտի բանասեղծ Գ. Մ. Դերժավինի (1743—1816  
թ. թ.) «Հիման Մեշերսկու մահը» բանաստեղծությանից։

Յերիտասարդ Դուրբուվսկին իր ժամանելուց մի քանի ոք հե-  
տո ուղում եր զբաղվել գործերով, բայց հայրն իվիճակի չեր  
նրան անհրաժեշտ բացատրություններ տալու—Անդրեյ Գալյու-  
լովիչը համատարմատար չուներ։ Յրքելով հոր թղթերը, վա-  
ռակմիմ յեր գտավ միայն ատենակալի առաջին նամակն ու պատաս-  
խանի ուսազրությունը, վորոնցից չկարողացավ գաղափար կազ-  
մել գործի եյության մասին, և վորոշեց սպասել հետեւնքներին՝  
հույս զնելով իր գործի իրավացիության վրա։

Մինչ այս մինչ այն, Անդրեյ Գալյուլովիչի առաջությու-  
նը ժամանակամ վատանում եր։ Վաղեմիմ իրը նախատեսում եր  
առողջության արագ քայլայումը և չեր հեռանում ծերումուց,  
վորն ուղղակի յերեխայի ինամք եր պահանջում։

Մինչեւ վորոշված ժամկետն անցավ և վերաբատության  
խնդիր չարուցվեց։ Կիտանելիկան պատկանում եր Տրոյեկութու-  
վին։ Շաբաշկինը ներկայացավ նրան, վլուխ տվեց, չնորհավորեց  
ու ինդրեց հայտնել, թե նորին վերապանցությանը յե՞ր հա-  
մելի կլինի անցնել նոր ձեռք բերված կարշածքի տիրապետու-  
թյան, արշյոք ի՞նքը պիտի այդ անի, թե կարեհաճի վորեն  
մեկին դրա համար հավատարմագիր տալ։ Կիրիլա Գետրովիչը  
չփոթմեց։ Բնությունից նա շահամու չեր, վրեժինդրության  
ցանկությունը նրան շատ հեռու տարակ, խիղճն սկսեց բողոքել։  
Նա գիտեր, թե ինչ դրության մեջ և իր հակառակորդը, իր յե-  
րիտասարդության հին ընկերը, —և հաղթանակը չեր ուղախաց-  
նում նրա սիրուց։ Նա ցակու նայեց Շաբաշկինին, հայհոյելու  
առիթ փնտուելով, բայց բավականաչափ այլպիսի տակի չդատավ,  
բարկությամբ ասաց նրան։

— Կորի՛ր զնա, քեզ հետ վլուխ չունեմ։

Շաբաշկինը, տեսնելով նրա վատ տրամադրությունը, գլ-  
ոււխ տվեց ու շտապ հետացավ։ Կիրիլա Գետրովիչը, մենակ մը-

1 «Ուր սեղանն եր խորտիկների, այստեղ զադաղ և զրված»—այս եղի-  
քափը վերցրած և առ հայտի բանասեղծ Գ. Մ. Դերժավինի (1743—1816  
թ. թ.) «Հիման Մեշերսկու մահը» բանաստեղծությանից։

նալով, սկսեց յետ ու առաջ քայլել, սուլելով «Ծնկա, հարպո-  
րյան վարու»—ը, վոր միշտ անում եր իր մտքերի արտասովոր  
առենձության ժամանակ :

Վերջապես նա հրամայեց լծել թեթև կտոքը, տաք զդեմ  
հագալ (այդ սեպտեմբերի վերջին եր) և լնքը վարելով կտոքը,  
դուրս մեկան բակից :

Եռաւով նա տեսավ Անդրեյ Գավրիլովիչի անակը և զողբացվեց իրար հակառակ զգացմունքներով: Բավարարված վրեժ-խընկությունն ու իշխելու սերը նրա մեջ վորոշ չափով խեղճել ելին ավելի ազնիվ զգացմունքները, բայց վերջիններս այսուսա- մենախիվ հաղթեցին: Նա վորոշեց հաշտվել իր հին հարևանի հետ, վոճաչացնել վեճի հետքերը, վերադարձնել նրան իր գույշ- հետ, Վյու բարի մտադրությամբ թիթեացնելով իր հոգին, կիրիւտ քը: Այս բարի մտադրությամբ թիթեացնելով իր հոգին, կիրիւտ Պետրովիչը կառքը քշեց դեպի հարևանի ապարակն ու մտավ ուղղակի տան բակը:

Այդ ժամանակ Հիվանդը նստած եր ննջարառութ, լուսամուտի մոտ։ Նա ճանաչեց Կիրիլա Պետրովիչին, և սարսափելի հուզմունքը պատկերացավ նրա դեմքի վրա. սովորական դունատությանը տեղի տվեց վատ կարմրություն, աչքերը կայծկըլ-տեցին, նա խուլ ձայներ հանեց։ Վորդին, վոր անտեսական մատյաններն եր նայում, գլուխը բարձրացրեց և զարմացավ նրա վիճակի վրա։ Հիվանդը արսափ ու բարկություն արտահատող արթուրով ցույց տվեց դեպի բակը։

Նա շտապ հավաքեց իր խալաթի փեշերը, պատրաստվելով  
վեր կենալ բաղկաթուից. մի փոքր բարձրացավ... և հանկարծ  
ընկալված կորդին վրա վագեց, ծերունին պառկած եր անդամ  
անուններ: Նա կաթվածահար յեղամ:

— Շուտ արեք, չուտ, քաղաք դնացեք բժիշտ բլրելու,  
զնոսմ եք Վաղիմիլը:

— Կիրիլա Պետրովիչը հարցնում է ձեզ, — եթու ստուգի  
ստուգ սպասավորը:

— Ասաւ Կիրիլա Պետրովիչըն, վոր շուտ կորչք, քառվ գումար հայտնաբար նրան մանդել բակից—գնա՞ :

Սպասավորն ուրախությամբ վաղեց կատարելու եր ապա էաւաճանո : Յեզորովնան ձեռները խփում եր ծնկներին :

— Անոնի՛դ մատաղ, —ասաց նոր ծվծվան ձայնով, —վեռւխոր  
ժամանակ տակ մի՛ գնի, Կիրիլա Գետրովիչը մեղ կօսովի:

— Առի՞ր, դայտել, — հուզմունքով ասաց Վլադիմիրը, — այս  
բոսկեցիս Անտոնին ուղարկիր քաղաք, բժիշկ բերելու:

Յեղորդինան դուրս յեկավ: Նախասենյակում վոչ վոք չեար,  
—բոլոր սպասավորները թափվել եյին բակը՝ Կիրիլա Պետրովի-  
չին վիտելու: Յեղորդինան դուրս գնաց և լսեց սպասավորի պա-  
տասախանը, վոր նա տալիս եր յերիտասարդ աղայի անունից:  
Կիրիլա Պետրովիչը կառքում նատած լսեց նրան: Նըս գեմքն ա-  
վելի մոռայլվեց, քան զիշերը, նա արհամարհանքով ժպտաց,  
ցասեկուտ նայեց սպասավորներին և կառքը կամաց քշեց տան մո-  
տով: Նայեց նաև այն լուսամուտին, վորի մոտ ըռպեներ առաջ  
նստած եր Անդրեյ Գավրիլովիչը, իսկ հիմա այնտեղ չեր: Դա-  
յակը կանդնած եր մուտքի սանդուղքի վրա, մոռանալով աղայի  
հրամանը: Սպասավորներն աղմկալից խոսում եյին այս գեպքի  
մասին: Հանկարծ Վլադիմիրը յերևաց նրանց մեջ և կցկտուր ա-  
սաց, —թիշեկ հարկավոր չե, հայրիկը վախճանմեց:

Իրարանցումն սկսվեց : Սպասավորները վաղեցին ծերունի աղայի սենյակը : Նա պառկած եր այն բաղկաթոոի վրա, ուր նրան նստեցը եր վլադիմիրը : Ծերունու աջ ձեռքը կախվել ու հասել եր հատակին, գլուխը թեքվել կրծքին : Կյանքի նշույլ չկար նրա զեռ չսառած, բայց արդեն մահով այլանդակված մարմնի մեջ : Յեղորովնան սկսեց լաց ու կոծը : Սպասավորները շրջապատեցին իրենց խնամքին թողնված դիակը, լողացրին, հաղցրին դեռ 1797 թվականին կարված համազգեստը և դրին հենց այն սեղանի վրա, վորի շուրջն այնքան տարի սպասարկել ելին իրենց տիրոջ :

ԳԼՈՒԽՆ

Թաղումը տեղի ունեցավ մահվան յերրորդ որը : Խեղճ ծե-  
րումու դիակը սեղանի վրա յեր, պատանքով ծածկված և մո-  
մերով շքապատված : Սեղանատունը լիքն եր սպասավորներով,  
պատրաստվում ելին դիակը գուրս տանելու : Վլադիմիրն ու յե-  
րեք սպասավոր բարձրացրին դադաղը : Քահանան անցավ առաջ,  
տիրացուն ուղեկցեց նրան, թաղման աղոթքներ յերգելով :  
Կիստենելվայի տերը վերջին անդամ անցավ իր տան շեմից : Դա-  
դաղը տարան պուրակի միջով : Որը պայծառ եր ու ցուրտ : Աշ-  
խանային տերեւները թափվում ելին ծառերից :

Դուրս դաշտով պղուրակից, նրանք տեսան կիստենելիայի փայտաշեն յեկեղեցին և գերեզմանոցը, վորը ստվերված եր հնամյա լորիներով։ Այստեղ հանդչում եր Վլաղիմիրի մոր դիակը, այստեղ, նրա շիրիմի մոտ, նախորդ որը նոր փոս եր փորված։

Յեկեղեցին լիքն եր կիստենելիայի գյուղացիներով, վորոնք յեկել եյին վերջին հրաժեշտը տալու իրենց տիրոջը։

Յերիտասարությունը Դուբրովսկին կանգնած եր դասում<sup>1</sup>, նո չեր լալիս ու չեր աղոթում, բայց գեմքը սարսափելի յեր։ Տիսուր ծխալատարությունը վերջացավ։ Վլաղիմիրն առաջինը հրաժեշտ տվից դիակին, նրանից հետո—բոլոր սպասավորները։ Բերին դաղաղի կալարիչը և ծածկեցին այն։ Կանայք բարձրածայն լալիս եյին, գեղջուկները հաճախ ձեռներով սրբում եյին արցունքները։ Վլաղիմիրը և նույն յերեք սպասավորներն ամբողջ գյուղի ուղեցությամբ գիտակը տարան գեպի գերեզմանափում։ Դադաղն իջեցրին գերեզման։ Բոլոր ներկաները միմի բուռ հող նետեցին այնտեղ։ Փոսը հողով լցրին, հրաժեշտ տվին ու ցրեցին։ Վլաղիմիրն շտապ հեռացավ, բոլորից առաջ անցավ ու չքացավ կիստենելիայի պուրակում։

Յեղորովնան նրա անունից տերտերին և յեկեղեցու բոլոր մյուս սպասավորներին հրավիրեց քելեխի, հայտարարելով, թե յերիտասարու աղան մտաղիր չե քելեխին ներկա դոնովել։ Յեղայսպիսով տեր-Անտոնը, յերեցկին Յեղորովնան և ախրացում վոտով զնացին աղայի տունը, Յեղորովնայի հետ խոսելով հանգուցյալի բարեմասնությունների մասին, և այն մասին, թե ինչ է սպասում նրա ժառանդին։ (Տրոյեկուրովի ժամանումը և նըրան ցույց տված ընդունելությունն արդեն հայտնի եյին ամբողջ արվարձանին<sup>2</sup> և այնտեղի քաղաքագետները գրանից մեծ հետվանքներ եյին գուշակում)։

— Ինչ լինելու յե, են ել կլինի, — ասաց յերեցկինը, — ափսոս, յեթե Վլաղիմիր Անդրեյելիչը չլինի մեր աղան։ Լա՛վ աղային, խոսք չկա։

— Նրանից բացի ել ո՞վ պիտի լինի մեր աղան, — ընդհատեց Յեղորովնան։ Կիրիլա Պետրովիչը զուր տեղն և տաքանում, թող չկարծի թե վախկոտի յե հանդիսել։ Իմ գառնիկը համ ինքն ի-

րեն կողաշտովանի, համ ել, աստծո կամքով, բարի մարդիկ կողնեն նրան։ Շա՛տ ե գոռողացել եղ Կիրիլա Պետրովիչը։ Գիտե՞ք, թե վոնց պոչը քաշեց, յերբ իմ Գրիշկան գոռաց վրան—կորի՛ր, քավթառ չուն, կորի՛ր ես տնից։

— Ա՛խ, Յեղորովնա, — ասաց տիրացուն, — Գրիգորի լեզուն եղ վո՞նց ե դարձել. յես կարծես ավելի չուտ կհամաձայնեմ սրբազնի վրա հաջել, քան ծուռը մտիկ տալ Կիրիլա Պետրովիչին։ Նրան տեսնում ես թե չե, դողն ընկնում ե ջանել, չես իմանում վոնց ծլես։

— Ունայնություն ունայնությանց, — ասաց քահանան, — Կիրիլա Պետրովիչին ել հավերժ հիշատակ կերպեն, վոնց վոր հիմա Անդրեյ Գավրիլովիչին, միայն թե կթաղեն վոնց վոր հարուստին, շատ հյուրեր կհրավիրեն։ Բայց աստծո համար միենույն չե<sup>3</sup>...

— Ա՛խ, տերտեր, մենք ել ուզում եյինք կանչել ամբողջ արվարձանը, բայց Վլաղիմիր Անդրեյելիչը չուզեց։ Մեր ի՞նչն է պակաս։ Հյուրասիրելու համար ամեն բան կա, բայց ի՞նչ արած։ Յեթե շատ մարդ չկա, դոնե ձեզ մի լավ կպատվեմ, մեր թանգարի՛ն հյուրեր։

Այս փաղաքական խոստումն ու քաղցր խնջույքի հույսն արագացրին խոսակիցների քայլերը, և նրանք բարեհաջող կերպով հասան աղայի տունը, վորտեղ արդեն սեղանը պատրաստ եր և ողին մատուցված։

Այդ պահին Վլաղիմիրը գնում եր խիտ ծառերի արանքով, աշխատում եր շարժումներ կատարելով և հողնածությամբ խեղդել իր հողեկան վիշտը։ Նա զնում եր առանց ճանանգար ընտրելու։ Ծառերի ճյուղերն ամեն րոպէ դիպչում ու ճանդուում եյին նրան։ Վոտներն ամեն րոպէ թաղվում եյին ճահճուտներում, — նա վոչինչ չեր նկատում։ Վերջապես, նա հասալ մի փոքրիկ ձորակ, վոր բոլոր կողմերից ըրջապատված եր անտառով։ Առվակը լուռ գալարվում եր ծառերի միջով, վորոնց տերեները կիսով չափ թափված եյին։ Աշումն եր։ Վլաղիմիրը կանգ առավ, նստեց, պաղ ճմի վրա, և նրա հողում մեկը մյուսի յետեկց մոայլ կերպով խոնվեցին մտքերը… Նա իրեն խիստ մենակ եր զգում։ Գալիքը ծածկված եր ահեղ ու մե ամպերով։ Տրոյեկուրովի հետ ունեցած թշնամանը նոր դժբախտություններ եր նախադուչակում։ Նրա աղքատ գույքը կարող եր անցնել ուրի-

1 Դաս — յեկեղեցու այն տեղը, վորտեղ կանգնում և յերեցին խօսմբը։

2 Արքայի ամառանում արտակարգ աշխատեղ նշանակում և շրջակա գյուղերի բնակչությունը։

շի ձեռքը, այդ դեպքում մուրացիկություն եր սպասում նրան և նո յերկար, անշարժ նստած եր նույն տեղում, նայելով դանդաղահճոս առվակին, վորը տանում եր մի քանի դեղնած տերեներ և նման եր կյանքին, մի նմանություն, վորը սովորաբար այնքան ճիշտ և լինում: Վերջապես Վլադիմիրը նկատեց, վոր սկսում և մթնել: Նա վեր կացավ և սկսեց վնասուել տան ճանապարհը, բայց գեռ յերկար դեղերեց անծանոթ անտառում, մինչև վոր զտավ մի արահետ, վորը նրան հասցրեց ուղղակի իր տան դարպանը:

Դուրսովսկին հանդիպեց տերտերին և մյուս յեկեցական սպասալորներին:

Նա մտածեց, վոր այդ քատ նշան է, —ակամա չեղվեց ճանապարհից և թագնվեց ծառի տակ: Յեկեցու սպասավորները նրան չնկատեցին և մոտիկից անցնելով՝ տաք-տաք խոսում եյին:

— Հեռացիր չարիքից և բարի գործ արա, —ասում եր տերտերը յերեցկնոջը, —եւ ի՞նչ գործ ունենք այստեղ մնալու: Գեղինչ, թե բանն ինչով կվերջանա:

Յերեցկին ինչ-վոր պատասխան տվեց, բայց Վլադիմիրը չլսեց նրա խոսքերը:

Մոտենալով իր տանը, նա տեսավ մարդկանց բազմություն, —զյուղացիներն ու սպասավորները խմբվել եյին բակում: Դեռ հեռվից Վլադիմիրը լսեց անսովոր մի աղմուկ և խոսակցություն: Մարագի առջև յերկու յեռածի կառք եր կանդնած: Տան մուտքի մոտ մի քանի անծանոթ մարդիկ, վորոնք աստիճանավորների տարառով եյին, կարծես զատողություններ եյին անում ինչ-վոր բանի մասին:

— Այս ի՞նչ և նշանակում, —բարկությամբ հարցրեց նա Անտոնին, վորը վաղեց նրան դիմավորելու, — այդ ովքը են և ի՞նչ են ուղում:

— Այս, Վլադիմիր Անդրեյեվիչ, —շնչակուր պատասխանեց ծերունին, — պատարանն ե յեկել: Մեղ հանձնում են Տրոյեկուրովին, մեղ խլում են քո վողորմածությունից...

Վլադիմիրն այլայլվեց, սպասավորները շրջապատեցին իրենց դժբախտ տիրոջը:

— Ո՞վ գու մեր հայր, —գոռոսմ եյին նրանք, համբուրելով Վլադիմիրի ձեռները, —քեզանից բացի ուրիշ աղա չենք ուղում:

Հրամայիր, պարո՞ն, և մենք կվոնդենք դատարանը, կմեռնենք, բայց քեզ չենք թողնի:

Վլադիմիրը նայում եր նրանց և տարորինակ զգացմունքներ եյին հուղում նրան:

— Կանդնեցի՞ք հանդարտ, —ասաց նա, —իսկ յես կխօսեմ զատավորների հետ:

— Խոսի՛ր, հայր, — գոչեցին ամբոխի միջից, — խղճի բեր եղ անիծվածներին:

Վլադիմիրը մոտեցավ չինովնիկներին: Շաբաշկինը, վոր գլխին կարտուզ եր ծածկել, ձեռները կողքին դրած կանդնել ու հպարտ զիտում եր իր շուրջը: Գավառական վոստիկանապետը՝ կարմիր զեմքով, բեխերով, բարձրահասակ ու հաստափոր մի աղամարդ, տեսնելով մոտեցող Դուրսովսկուն, մոմաց և խըռպոտ ձախով ասաց.

— Այսպես ուրեմն, ձեղ մոտ ել կրկնում եմ այն, ինչ վոր արդեն ասել եմ, — պավառական զատարանի վորոշմամբ այսուշետք պուք պատկանում եք կիրիլա Պետրովիչ Տրոյեկուրովին, վորի ներկայացուցիչն այստեղ ու. կատարեցեք վորի բոլորը, ինչ վոր նա հրամայի, իսկ դուք, կանայք, սիրեցեք ու հարգեցեք նրան, իսկ նա ձեղ շատ և սիրում:

Այս սուր կատակի վրա զավառական վոստիկանապետը հըստուցաց, Շաբաշկինն ու մյուսներն ել հետեւցին նրան: Վլադիմիրի զայրույթն իր գագաթնակետին հասավ:

— Թույլ տվեք իմանալ, այս ի՞նչ և նշանակում, — շինծուտանառարտությամբ հարցրեց զավառական ուրախ վոստիկանապետին:

— Այս այն և նշանակում, — պատասխանեց հնարամիտ տարիմանավորը, — վոր մենք յեկել ենք սույն զույքը հանձնելու կիրիլա Պետրովիչ Տրոյեկուրովին և մյուսներին ինպելու, վոր քանի վողջ են հեռանան այստեղից:

— Բայց զույք կարծեմ նախքան իմ զյուղացիներին գիմել կարող ելիք ինձ դիմել և հայտարարել կալվածատիրոջը, վոր հրաժարվի իշխանությունից...

— Իսկ դու ով ես, — հարցրեց Շաբաշկինը, հանդինությամբ նայելով, — նախկին կալվածատեր Անդրեյ Գավրիլի վորդի Դուրսովսկին աստծո կամքով մեռալ, մենք ձեղ չենք ճանաչում և չենք ել ուղում ճանաչել:

— Զերդ ազնվություն, մեր յերիտասարդ աղան ե, — ասաց մեկն ամբոխի միջից, — Վլադիմիր Անդրեյիվիչը:

— Այդ ո՞վ համարձակվեց բերան բանալ, — բարկությամբ ասաց գալառական վոստիկանապետը, — ի՞նչ աղա, ի՞նչ Վլադիմիր Անդրեյիվիչ. ձեր աղան Կիրիլա Պետրովիչ Տրոյեկուրավին է, բո՞յմ եք, հայրաններ:

— Վո՞նց չե, — ասաց նույն ձայնը:

— Այս խոռվություն ե, — գոռաց գալառական վոստիկանապետը, — ե՛յ, տանուտե՛ր, յեկ այստեղ:

Տանուտերը մոտեցավ:

— Այս բոպեցիս գտիր նրան, ով համարձակվեց խոռվել ինձ հետ: Յես նրան...

Տանուտերը դիմեց ամբոխին, հարցնելով, թե ով եր խոռվը: Սակայն բոլորը լուր ելին: Շուտով հետին շարքերում սկսվեց տրոտոմջ, վորը սաստիկացավ և մի րոպեյում սարսափելի վայնասուն դարձավ: Գալառական վոստիկանապետը ցածրցրեց իր ձայնը և ուղարկեց համոզել նրանց...

— Ել ի՞նչ ենք դրա ռեխին մտիկ անում, — գոռացին սպասուրները, — ողի՞ք դրանց և ամբոխը շարժվեց:

Տարաշինն ու մյուս անդամները դիմագալատառ վազելով մտան նախասենյատի և փակեցին դուռը:

— Տղե՛ք, կատեցե՛ք դրանց, — գոռաց նույն ձայնը, և ամբոխն սկսեց գրոհ տալ:

— Սպասեցե՛ք, — գույց Դուբրովսկին, — Հիմարներ, ի՞նչ եք անում, դուք կորցնում եք ինձ ել, ձեզ ել, զնացեք աներդ և հանդիսատ թողեք ինձ: Մի՛ վախենաք, թագալյորը վողորմած ե, յես նրան կիսնդրեմ, նա մեղ չի զրկի, մենք բոլորս նրա դաշակներն ենք: Ել յես ինչպես նրան ձեզ համար մի բան խնդրեմ, յեթե սկսեք խոռվություն և ավագակություն անել:

Եերիտասարդ Դուբրովսկու ճառը, նրա հնչուն ձայնն ու վեհականը ցանկալի աղջեցություն դործեցին: Ամբոխը հանդարտվեց, ցրվեց: Բակը դատարկվեց: Դատարանի անդամները նստած եին առնը: Վերջապես, Տարաշինը կամացուկ բացեց գոռաց, գուրս յեկավ և ստորաքարշությամբ սկսեց շնորհակալություն հայտնել Դուբրովսկուն, նրա ցույց տված պաշտպանության համար:

Վլադիմիրը քամահրանքով լուց նրան և վոչինչ չպատասխանեց:

— Մենք վորոշեցինք, — շարունակեց ատենակալը, — ձեր թույլտությամբ մնալ այստեղ դիշերելու, թե չե արդեն մութն ե և ճանապարհին ձեր մուժիկները կարող են հարձակվել մեղ վրա: Շնորհ արեք, հրամայեցեք թեկուղ խոտ փոել հյուրասենյակում: Լույսը բացվեց թե չե, մենք խկույն կհեռանանք:

— Ինչ ուզում եք արեք, — սառը պատասխանեց Դուբրովսկին: — յետ արդեն տեր չեմ այստեղ:

Այս ասելուց հետո նա առանձնացալ իր հոր տենյակում ու վակվեց այստեղ:

#### Գլուխ VI

«Այսպես ուրեմն, ամեն ինչ վերջացավ, — ասաց նա ինքն իրեն, — գեռ առավոտյան յես ունեյի անկյուն ու մի կտոր հաց: Այս տունը, ուր յես ծնվել եմ, ուր մեռել ե իմ հայրը, վաղը սկսած ե թողնեմ այն մարդուն, վորը նրա մահվան և իմ աղքատության պատճառն ե: Յեւ նրա հայրացքը գամվեց մոր պատկերին: Նկարիչը այստեղ եր տվել այդ պատկերը... Վլադիմիրի մայրը հենված եր բաղրմիքներին, առավոտյան սպիտակ հագուստով, մագերի մեջ՝ մի վարդ: «Այս պատկերն ել կընկնի իմ ընտանիքի թշնամու ձեռքը, — մտածեց Վլադիմիրը, — ջարդված աթոռների հետ կնետիլ նկուղ, կամ կվակցվի նախասենյակում, կդանաւ նրա շնապահների ծաղրի ու դիմողությունների առարկա, իսկ մորս ննջարանում, այն սենյակում, ուր մեռավ հայրը, կրնակիլի նրա գործակատարը, կամ կտեղավորվի նրա հարեմը: Վո՞չ, վո՞չ, թող նրա ձեռքը չընկնի այս տիսուր տունը, վորտեղից նա ինձ դուրս ե անում»: Վլադիմիրը կրծտացրեց ատամները: Նրա դիմում սարսափելի մտքեր ծագեցին: Դատական դրբանկալի աղջեց ամբոխը ձայները համուսմ եյին նրան: Այդ մարդիկ կարգադրությունները եյին անում, մերթ այս եյին պահանջում, մերթ այն, ընդհատելով նրա տիսուր մտքերը: Վերջապես, ամեն ինչ լուեց:

Վլադիմիրը բացեց պահարաններն ու արկղները, զբաղվեց հանգուցյալի թղթերով: Դրանք մեծ մասամբ տնտեսական հաշիվներ եյին և գանապան գործերի վերաբերյալ գրություններ: Վլադիմիրը սահման կարգալու պատռում եր թղթերը: Սրանց մեջ

գտնվեց կնոջս նամակները մակադրությամբ մի ծրաբ։ Վլադիմիրին սկսեց հուզմունքով կարդալ այդ նամակները։ Դրանք գըրված եյին պատերազմի ժամանակ և կիստենեկայից ուղարկվել եյին բանակի հասցեյով։ Կինը նկարադրում եր իր դատարկ կյանքը, անտեսական զբաղմունքները, քնքաբար դանդատվում անջատման մասին և ամուսնուն կանչում տուն, դեպէ վաղաքուշ ընկերուհու դիրկը։ Նամակներից մեկում մայրն անհանգստություն եր հայտնում փոքրիկ վլադիմիրի առողջության մասին։ Մի այլ նամակում նա ուրախանում եր վլադիմիրի վաղաժամ ունակությունների առթիվ ու նրա համար նախառեսում եր փայլուն ու յերջանիկ արագա։ Վլադիմիրը խորացալ ընթերցման մեջ, և մոռացավ ամեն ինչ, ընկղմվելով ընտանեկան յերջանկության աշխարհը, և չնկատեց, թե ինչպես թռան ժամերը պատի ժամացույցը խփեց տասնմեկը։ Վլադիմիրը նամակները դրեց գրպանը, վերցրեց մոմն ու դուրս յեկալ կարինետից։ Դահմուամ, հատակի վրա քնած եյին աստիճանավորները։ Սեղանի վրա դրված եյին նրանց դատարկած բաժակները, և ոոմի ուժեղ բույրը տարածվել եր ամբողջ սենյակում։ Վլադիմիրը նրանց մոտեց զգվանքով անցալ նախասենյակը։ Դուռը փակ եր։ Վլադիմիրը, բանալին չգտնելով՝ վերադարձավ դահմի։ Բանալին գրտնըվամ եր սեղանի վրա։ Վլադիմիրը բացեց դուռը և իր առջև տեսակ մի մարդ, վորը կծկվել եր անկյունում, փայլուն կացինը ձեռքին։ Մոմով լուսավորելով նրան՝ Վլադիմիրը ճանաչեց դարբին Արխիպին։

— Ի՞նչ ես անում այստեղ, — հարցրեց նա։

— Ա՛յս, Վլադիմիր Անդրեևիչ, այդ գո՞ւք եք, — չշնչալով պատասխանեց Արխիպը, — անք, վոր դուք մոմ եյիք վերցրել։

Վլադիմիրը առջած եր նրան։

— Ի՞նչո՞ւ յես այստեղ թագնվել, — հարցրեց նա դարբնին։

— Յես ուզում եյի իմանալ՝ տա՞նին են բոլորը, — դամացուկ ու կցիտուր պատասխանեց Արխիպը։

— Իսկ ինչո՞ւ կացին ես վերցրել։

— Ի՞նչու յեմ վերցրե՞լ, բա հիմի առանց կացնի վո՞նց կլնի։ Ես աստիճանավորներն ենակես կատաղած մարդիկ են... մեկ ել տեսար...։

— Դու հարբած ես, դե՞ն դցիր կացինը, դնա քնիր։

— Յես հարբա՞ծ, աղա ջան, Վլադիմիր Անդրեևիչ, աստված և վկա, խսկի մի կաթիլ ել բերանս չեմ առել։ Ե՞ս, դինու մասին ո՞վ ե մտածում, լսվա՞ծ բան ե, չինովնիկներն ուզում են մեկ տեր դառնալ, չինովնիկները վոնդում են մեր աղաներին իրենց տանից... Ե՞ս, խոյմիւմ են անիծվածները։ բոլորին մի անդամից տեղն ու տեղը քնեցնես, հետո ել ջուրը նետես։

Դուբրովսկին խոժոռվեց։

— Լսի՛ր, Արխիպ, — ասաց նա, մի փոքր լուկուց հետո, — լավ բան չես մտածել։ Դրանք մեղավոր չեն։ Լապտերը վառիք ու յեկ իմ հետեւից։

Արխիսկն արայի ձեռից վերցրեց մոմը, վառարանի յետեռամ գտավ լսալուերը, վառեց, ու յերկուսով կամացուկ իջան դրսի սանղուկաքից ու զնացին բակի մոտով։ սպահապանն սկսեց դարձել թուջե տախտակին, չները հաջեցին։

— Ո՞վ ե պահապանը, — հարցրեց Դուբրովսկին։

— Մենք ենք, աղա՛, — պատասխանեց բարակ մի ձայն, — Վասիլիստան և Լուկերիստան։

— Գնացե՞ք ձեր տները, — ասաց Դուբրովսկին, — այստեղ դուք հարկավոր չեք։

— Հերիք ե պահապան կանգնեք, — ասաց Արխիպը։

— Շնորհակալ ենք, բարերա՛ր, — պատասխանեցին կանայք և խկույն զնացին տուն։

Դուբրովսկին շարունակեց գնալ։ Նրան մոտեցան յերկու հոգի ու ձայն տվյալն։ Դուբրովսկին ճանաչեց Անտոնի ու Գրիշայի ձայները։

— Ի՞նչո՞ւ չեք քնում, — հարցրեց նա։

— Ել ի՞նչ քուն, — պատասխանեց Անտոնը, — ի՞նչ որի հասնք, ո՞մ մտքովը կանցներ։

— Կամա՞ց, — ընդհատեց Դուբրովսկին, — ո՞ւր ե Յեղորովնան։

— Աղայի տանն ե, իր սենյակում, — պատասխանեց Գրիշան։

— Գնա նրան բեր այստեղ, մերոնց բոլորին դուրս բեր տանից, վոչ մի մարդ այստեղ չմնա, բացի աստիճանավորներից, իսկ դու, Անտոն, լծի՛ր ուսյլ։

Գրիշան զնաց և մի քանի բոպեյից հետո վերադարձավ իր մոր հետ։ Պառավն այդ դիշեր չեր հանվել։ Բացի աստիճանավորներից, տանը վոչ վոք աչքերը չեր փակել։

— Այստեղ են բոլորը, — ամբողեց Դուքրովսկին, — տանը վոչ չմնա՞ց:

— Բայցի աստիճանավորներից, վոչ վոչ, — պատասխանեց Գրիշոն:

— Այստեղ խոտ կամ ծղոտ բերեք, — ասաց Դուքրովսկին: Մարդիկ վազեցին ախոռով և խոտ բերին՝ ով ինչքան կարող ե՞ր:

— Դրեք սանդուխքի տակ, — ա՛յ, այլպես: Հա՛պա, տղե՛րք, կրա՞կ ավեք:

Արխիպը բացեց լապտերը: Դուքրովսկին վառեց մարիսը:

— Սպասի՛ր, — ասաց նա Արխիպին, — կարծեմ յես շտապելուց փակեցի նախասենյակի դուռը, գնա բաց արա, չ՛տ:

Արխիպը վաղեց նախասենյակ: Դուռը բաց եր: Արխիպը փակեց բանալիով, կիսամայն շնչարլով. — Վ'նց չե, բաց արա, — և վերադառն Դուքրովսկու մոտ:

Դուքրովսկին մարիսը մոտեցրեց խոտին: Խոտը բանկվեց, բոցավառվեց ու լուսավորեց ամբողջ բակը:

— Ա՛խ, — ցալադին մրմնջաց Յեղորովնան, — Վլադիմի՛ր Անդրեևիչ, ի՞նչ ես անում:

— Լովիր, — ասաց Դուքրովսկին: — Ե՛հ, տղերք, միա՛ք բարով, կդնա՛մ, ուր վոր աստված տանի: Յերջանի՛կ յեղեք ձեր նոր տիրոջ հետ:

— Ո՛վ մեր հայր, ո՛վ բարերար, — պատասխանեցին սպասալորմերը, — կմեռնենք, բայց քեզ մեռնակ չենք թողնի, կդանք քեզ հետ:

Զիերը պատրաստ եյին: Դուքրովսկին Գրիշայի հետ նստեց սայլը և երանց տեսակցության վայր նշանակեց կիստենեկայի պուրակը: Անտոնը մարակեց ձիերին ու նրանք դուրս յեկան բարելից:

Քամին բարձրացավ: Բոցը մի բոպեյում ընդդրկեց ամբողջ տունը. կարմիր ծուխը գալարվում եր կտուրի վրա: Ապակիները զրնդում եյին ու թափառում, ընկնում եյին բոցավառված գերանները, լավեց աստիճանավորների աղեկտուր հեծեծանքն ու աղաղակը՝ «ողնեցե՛ք, ողնեցե՛ք»:

— Վ'նց չե, — ասաց Արխիպը, չարախինդ ժալիտով դիտելով Հրդե՛ր:

— Արխիպ'ոլ ջան, — ասաց Յեղորովնան, — աղատիր եղ ոնիծածածներին, աստված կվարձատորի քեզ:

— Վ'նց չե, — պատասխանեց դարբինը:

Այդ բոպեյին յնկվորները յերևացին լուսամուտից, աշխատելով ջարդել կրկնակի մըսմակները: Բայց այստեղ կտուրը ճըք ճքալով վուկ յեկավ և ճիշերն այլևս չլսվեցին:

Շուտով բոլոր սպասավորները դուրս թափնիցին բակը: Կանայք աղմմեկով շտապում եյին աղատել իրենց ինչքը, յերեխաները հրդեհով գմայլված՝ թոշկոտում եյին: Կայծերը թացում եյին հրեղեն բուքի նման: Խրծիթները բռնկվեցին:

— Հիմի ամեն բան լավ ե, — ասաց Արխիպը, — Վ'նց և վառվում, հը: Յերակի Պոկրովակոյից նայելը հետաքրքիր կլինի:

Այդ բոպեյին նրա ուշադրությունը զրավեց մի նոր յերեւկույթ: Կատուն վազվզում եր բոցավառված մարադի կտուրի վրա, չիմանալով վորտեղից թոշի — ամեն կողմից նա չըշապատված եր բոցով: Խեղճ կենդանին ցալալի մայլյունով ողնությունն եր կանչում, յերեխաները թուլանում եյին ծիծաղից, տեսնելով նրա հուսահատությունը:

— Ի՞նչ եք ծիծաղում, սաստանի՛ ճուտեր, — բարկությամբ ասավ Նրանց դարբինը, — աստծուց չե՞ք վախենում: աստծո արարածը մեռնում ե, իսկ դուք ուրախանում եք հիմարի պես: Յեկ սանդուղքը դեմ անելով վառվող կտրին, բարձրացավ կատվին ցած բերելու: Կատուն հասկացավ նրա մտադրությունը և հապճեալ գոհունակության տեսք ընդունելով, կտրավ գարբնի թևին: Կիսով չափ խանձված զարբինն իջնեցրեց կատվին:

— Ե՛հ, տղերք, միաք բարով, — ասաց նա չփոխված սպասավորներին, — յես այստեղ ել գործ չունեմ, մնացեք բարով, ավել պակասը ներեցեք:

Դարբինը դնաց: Հրդեհը դեռ վորոշ ժամանակ շարունակվում էր: Վերջապես, բոցը գալարեց, և ածխի կույտերն առկայծում եյին գիշերվա մթնում: Նրանց չուրջը թափառում եյին կիստենեկայի հրդեհից տուժած բնակիչները:

## ԳԼՈՒԽ VII

Հետեյալ որը հրդեհի լուրը տարածվեց ամբողջ արվարձանում: Բոլորը խոսում եյին հրդեհի մասին և զանազան յենթադրություններ անում: Վոմանք հավատացնում եյին, թե Դուք-

բովուկու սպասավորները քելեխի ժամանակ հարթել են և անդուռ-  
շարար հրդեհել տունը, մյուսները մեղադրում եյին աստիճանաւ-  
գորներին, վոր հարթել եյին այնուեղ, շատերը հավատացնում  
եյին, թե Դուքքովսկին նույնպես այրվել ե դեմստվոյի զատա-  
րանի և բոլոր սպասավորների հետ: Միքանիսը գուշակում եյին  
ճշմարտությունը և պնդում, վոր այդ սպասավելի վործության  
հանցավորն ինքը Դուքքովսկին ե, վորը գործել ե կատաղությու-  
նից և հուսահատությունից դրդված: Հրդեհի յերկրորդ որը յե-  
կալ Տրոյեկուրովը և անձամբ քննություն կատարեց: Պարզեց,  
վոր գալառական վոստիկանասպետը, դեմստվոյի դատարանի ա-  
տենակալը, փաստաբանն ու դրագիրը, ինչպես նաև Վլադիմիր  
Դուքքովսկին, դայակ Յեկորովնան, սպասավոր Դրիգորը, կառա-  
պան Անտոնը և դարբին Սրբիակն անհայտ կորել են:

Բոլոր սպասավորները վկայեցին, թե աստիճանավորներն  
այրվել են այն ժամանակ, յերբ փրկել ե տանիքը: Նրանց այր-  
ված վոստիկանները հանվեցին մոխրի միջից: Կանայք — վասիլի-  
սան ու լուկիերիսն ասացին, թե հրդեհից մի քանի բոտք առաջ  
տեսել են Դուքքովսկուն և դարբին Սրբիակին: Բոլորը վկայում  
եյին, վոր գարբին Սրբիակը կենդանի յե և հավանորին հրդեհի  
դիմավոր հանցավորը, յեթե վոչ միակ հանցավորը: Դուքքով-  
սկու վերաբերմամբ թունդ կասկածներ կային: Կիրիլա Պետրո-  
վիչը զեազի մանրամասն նկարագրությունն ուղարկեց \*\*\* նահան-  
դատեամբն և նոր գործ սկսվեց:

Շուտով ուրիշ տեղեկություններ ուրիշ անունդ տվին մարդ-  
կանց հետաքրքրության ու յենթաղրություններին: \*\*\*—ում յերե-  
վացին ավագակներ, վորոնք սարսափ եյին տարածում ըրջակա բո-  
լոր վայրերում: Նրանց դեմ կառավարության ձեռնարկած մի-  
ջոցներն անբավարար յեղան: Իրար հաջորդում եյին մեկը մյուտ  
սից անելի նշանավոր կողոպուտները: Ապահովություն չկար վոչ  
ճանապարհների վրա, վոչ ել գյուղերում: Ավագակները մի քանի  
յեռածի կառքերով, որը ցերեկով ըջում եյին ամբողջ նահան-  
գում, կանգնեցնում եյին ճանապարհորդներին ու փոստը, հաս-  
նում գյուղերը, կողոպուտն ու հրդեհում կավածառերի տնե-  
րը: Հրտակապետը հոչակվել եր իր խելքով, արիությամբ և  
ինչլոր բարեհոգությամբ: Նրա մասին հրաշքներ եյին պատմում:  
Դուքքովսկու անունն արտասանում եյին բոլորը: Բոլորը հավա-  
տացած եյին, թե խիզախ չարագործների պարագությը նա յե,

և վոչ թե մեկ ուրիշը: Միայն մի բանի վրա եյին զարմանում —  
Տրոյեկուրովի կարիածներն անձեռնմխելի եյին մնացել: Ավա-  
զակները չեյին կողոպտում նրա և վոչ մի մարտզը, չեյին կանդ-  
նեցնում նրա և վոչ մի սայլը: Տրոյեկուրովն իրեն հատուկ գո-  
ւոզությամբ այդ բացառությունը վերագրում եր այն յերկյու-  
ղին, վոր նա տարածել եր վողջ նահանգում, և այն արթուն  
վոստիկանության, վոր նա պահում եր իր գյուղերում: Տրոյե-  
կուրովի հարեաններն սկզբում ծալլրում եյին նրա այդ գուռու-  
թյունը, և ամեն մեկն սպասում եր, վոր անկոչ հյուրերն այցե-  
լին Պոկրովսկոյն, վորտեղ հարուստ ավար կդտնեն, բայց, վեր-  
ջապես, ստիպված յեղան համաձայնել Տրոյեկուրովի հետ և  
խոսովանել, վոր ավագակներն ևս անհասկանալի հարդանք են  
ցույց տալիս նրան... Տրոյեկուրովը հրձվում եր և Դուքքովս-  
կու կատարած յուրաքանչյուր կողոպուտից հետո ծաղրում նա-  
հանգակեատին, գալառական վոստիկանապետներին ու վաշտապե-  
տերին, վորոնցից միշտ անվնաս եր մնում Դուքքովսկին:

Մինչ այս մինչ այն, յեկալ հոկտեմբերի 1-ը՝ Տրոյեկու-  
րովի գյուղում յեկեղեցական տոնի որը: Բայց նախքան այդ  
հանդիսի և հետագա պատահարների նկարագրության անցնելը,  
մենք ընթերցողին պիտի ծանոթացնենք այն դեմքերի հետ, վո-  
րոնք նրա համար նոր են, կամ վորոնք մենք միայն հարեանցի  
հիշատակել ենք մեր վիպակի սկզբում:

#### ԳԼՈՒԽ VIII

Հավանուրեն ընթերցողն արդեն հասկացել ե, վոր Կիրիլա  
Պետրովիչի գուստը, վորի մասին մենք դեռ ընդամենը մի քա-  
նի խոռք ենք ասել, մեր վիպակի հերոսուհին ե: Մեր նկարա-  
դրած ժամանակաշրջանում նա 17 տարեկան եր, կատարելապես  
հասունացած գեղեցկությամբ: Հայրը խելահեղության չափ սի-  
րում եր նրան, բայց ցուցադրում եր իր սովորական քմահաճ  
վերաբերմունքը, մերթ բավարարելով նրա ամենաչնչին ցանկու-  
թյունները, մերթ վախեցնելով իր խիստ, յերեմն ել դաժան  
փարմունքով: Հավատացած վիճակով, վոր ինքը սիրված և աղջկա  
կողմից, հայրն այնուամենախիլ յերբեք չեր կարողանում արժա-  
նանալ նրա վստահության: Դուստարը սովորել եր հորից թագանել  
նահանք վստահության ու մտքերը, վորովհետև յերբեք չեր կարող  
իր գգացմունքներն ու մտքերը, վորովհետև յերբեք չեր կարող  
հցորիտ գիտենալ, թե դրանք ինչպիսի ընդունելություն կդանեն:

Նա ընկերուհիներ չուներ, մեծանում եր մենության մեջ: Հարևանների կանայք ու աղջիկները չառ քիչ ելին դառն կիրիլա Պետրովիչի մոտ, վորի սովորական խոսակցություններն ու գլարձությունները պահանջում եյին աղամարդկանց ընկերությունը և վոչ թե կահանց ներկայությունը: Հաղվաղեալ եր լինում, վոր մեր գեղեցկուհին յերեար կիրիլա Պետրովիչի մոտ քեֆ անող հյուրերի մեջ: Հսկայական գրադարանը, վոր մեծ մասամբ բաղկացած եր XVIII դարի Փրանսիական գրողների յերկերից, գտնվում եր նրա տրամադրության տակ: Նրա հայրը, վոր չեր կարդացել վոչինչ, բացի կատարելազործված խոհարարություց, չեր կարող գրքեր ընտրելիս ողնել նրան, և Մաշան քրքրելով ամեն տեսակ գրվածքները, բնականաբար կանդ տրավ ռոմանների վրա: Այսպես աղարտեց նա իր դաստիարակությունը, վոր սկսվել եր մամդել Սիմիի ղեկավարությամբ: Կիրիլա Պետրովիչը մեծ վստահություն ու բարեհաճություն եր տածում գեղի մամդել Սիմին, վորին վերջապես տիպված եր կամացովկ ուղարկելու ուրիշ կարմածք, յերբ նրանց մտերմության հետեւանքները իրաւության ակնհայտ դարձան: Մամդել Սիմին բավական հաճելի հիշատակ թողեց: Նա բարի աղջիկ եր և յերբեք իշարը չեր գործադրում այն աղջեցությունը, վորն ըստ յերեսութին ուներ կիրիլա Պետրովիչի վրա: Դրանով նա տարբերվում եր մյուս մտերմուհիներից<sup>2</sup>, վորոնց հաճախակի փոխում եր կիրիլա Պետրովիչը. Թվում եր վոր ինքը՝ կիրիլա Պետրովիչը նրան մյուսներից ավելի յեր սիրում, և սևաչյա տղան, 9 տարեկան մի չարաճճի, վոր հիշեցնուամ եր Սիմիի թուխ դիմարձերը, դաստիարակվուամ եր կիրիլա Պետրովիչի մոտ և ճանաչվում իրեւ նըս վորդին, թեև բաղմաթիլ վուտարորիկ տղաներ, վորոնք ջրի յերկու կաթիների պես նման եյին կիրիլա Պետրովիչին, վաղվզում եյին նրա լուսամուտների տակ և սպասակորների տղաներ եյին համարվուամ: Կիրիլա Պետրովիչն իր վորդիկ Սաշայի համար Մոսկվայից հրավիրեց Փրանսիացի մի ուսուցիչ, վորը Պոկրովսկոյե հասավ այն ժամանակ, յերբ տեղի եյին ունենում մեր նկարագրած դեպքերը:

Կիրիլա Պետրովիչին այս ուսուցիչը դուր յեկավ իր հաճե-

<sup>1</sup> Մամզել (Փրանսերեն) — որիորդ:

<sup>2</sup> Մտերմուհիներ — այն կանայք, վորոնց հետ կիրիլա Պետրովիչն առանձնապես մոտիկ եր:

ի արտաքինություն և պարզ վարդեցողությամբ: Նա կիրիլա Պետրովիչին ներկայացրեց իր վկայականներն ու մի նամակ՝ Յայեկուրովի ազգականից, վորի մոտ նա և տարիի տնային դաստիարակությունը եր յեղել: Կիրիլա Պետրովիչն այդ բոլորը քննեց և գործուածաց իր Փրանսիացու միայն յերիտասարդությունից, —վոչ թե այն պատճառությունը, վոր այդ անհամատեղելի համարեց ուսուցչի դժբախտ կոչմանն այնքան անհամատեց համբերատրության և վորձի հետ, այլ վորովհետեւ նրա մեջ կասկածներ առաջացան, և նա վորովհեց այդ կասկածներն իսկույն բացատրել ուսուցչին: Դրա համար նա հրամայեց իր մոտ կանչել Մաշային (Կիրիլա Պետրովիչը Փրանսերեն չեր խոսում, և Մաշան թարգմանէի դեր եր կատարուամ):

— Յե՛կ այստեղ, Մաշա! ասա այդ մոսյոյին, վոր ընդունուամ եմ նրան, միայն պայմանությունը, վոր չհամարձակվի իմ աղջիկների հետևեց լընկնել, թե չե՞ յետ շան լակուտին... Բարդամնի՛ր, Մաշա:

Մաշան կարմրեց և գլուխով ուսուցչին, Փրանսերեն առաջ նրան, վոր հայրը հույս ունի, թե նա կլինի համեստ և վայելուչ վարք կունենա:

Ֆրանսիացին գլուխով տվեց Մաշային ու պառասխանեց, թե հույս ունի հարգանքի արժանանա, յեթե նույնիսկ նրան մերժվի բարեհաճությունը:

Մաշան բառացի թարգմանեց նրա պատասխանը:

— Լա՛վ, լա՛վ, — ասաց կիրիլա Պետրովիչը, — նրան վոչ բարեհաճություն և հարգավոր, վոչ ել հարգանք: Նրա դարձն և ընհանություն և հարգավոր, վոչ կանչել հարգանքին, քերականություն և աշխարհագրություն սովորեցնել: թարգմանի՛ր:

Մարիա կիրիլովնան թարգմանելիս մեղմացրեց հոք կտպիտ արտահայտությունները, և կիրիլա Պետրովիչը Փրանսիացուն առողջականություն պանչող շմեքը, վորտեղ նրա համար սենյակ եր հաստկացված:

Մաշան վոչ մի ուշադրություն չդարձրեց յերիտասարդ Փրանսիացու վրա: Մաշան դաստիարակված եր արխոտոկրատական նախառաջարարություններով, և նրա համար ուսուցիչն սպասակությունը կամ րի կամ արհեստավորի պես մի քան եր, իսկ սպասավորը կամ արհեստավորը աղամարդ չեր նրա համար: Մաշան յեկատեց և

այն տպալորությունը, վոր թողել եր ո—ր<sup>1</sup> Դեֆորժի վրա, ըլոնկատեց նրա շիռմությունը, նրա հիացմունքը, նրա վուսաված ձայնը: Հետո մի քանի որ նա բավական հաճախ հանդիպում եր Դեֆորժին, առանց ավելի մեծ ուշարձության արժանացնելու: Մաշան անապասելի կերպով նոր գաղտափար կարմեց նրա մասին: Կիրիլա Գետրովիչի բակում սովորաբար պահպատ եյին արձի մի քանի ձագեր, վորոնք Պոկրովսկու կալվածատիրոջ գլուխոր զվարձալիքներից մեկն եյին: Յերբ նրանք շատ վորք եյին, ամեն որ բերվում եյին հյուրասենյակ, վորտեղ Կիրիլա Գետրովիչը ժամերով զբաղվում եր նրանցով, կովեցնում կատուների ու շան լակոտների հետ: Մեծանալով՝ նրանք չլինյական եյին պահպատ, սպասելով իսկական կովի: Յերբեմն աղայի տան լուսավուաների առաջ դուրս եյին բերում դիմու դատարկի մի տակառ, վրան մեխեր խփած, և դլորում եյին դիմու արջը: Վերջինս հոտուում եր տակառը, հետո թաթերով կամացուկ շոշափում, վիրավորում թաթերը, բարկանալով, ավելի ուժեղ հսկում տակառը և ցավն ավելի յեր սաստիկանում: Արջը բոլորովին կատազում եր, մոնչալով նետուում դեպի տակառը, մինչև վոր խեղճ դազանից հեռացնում եյին նրա ապարդյուն կատազության առարկան: Պատահում եր, վոր յերկու արջ լծում եյին սայլին, վորի վրա կամա թե ակօմա հյուրեր եյին նստեցնում ու սայլը բաց թողնում: Սակայն Կիրիլա Գետրովիչի լավագույն կատակը հետեւյան եր:

Սոված արջին փակում եյին դատարկ սենյակում, պարանավ կապում պատին ամբարդած ողակին: Պարանի յերկարությունը դրեթե հավասար եր լինում սենյակի վողջ տարածության, այնուհետ վոր միայն հակադիր անկյունը կարող եր ապահով լինել սարսափելի դադանի հարձակումից: Սովորաբար վորեւե նորեկ մարդու բերում եյին այդ սենյակի գոտան մոտ, սննդապատելի կերպով ներս եյին հրում սենյակը, փակում դուռը և դժբախտ զուհին թողնում բրդու մենակյացի մոտ: Խեղճ «Հյուրը» պատուառութած սիեշերով, ճանկուուված ու արյունլիիկ դարձած, շուտով գոտում եր անվանդ անկյունը, բայց ստիպված եր լինում յերբեմն ամբողջ յերեք ժամ կպչել պատին և տեսնել, թե ինչտես իրենից յերկու քայլի վրա կատազած գաղանը մոնչում եր,

շատկոտում, ծառա լինում, աշխատում ոլարանը պոկել և հասնել իր զուհին: Սրանք եյին ոռւս աղայի աղնիվ զվարձալիքները: Ուսուցչի ժամանելուց մի քանի որ հետո Տրոյեկուրովը հիշեց նրան և մտադրվեց հյուրասիրել արջի սենյակում: Դրա համար մի առավոտ կանչելով նրան, տարավ մութ միջանցքներով: Հանկարծ կողքի դուռը բացվեց, յերկու սպասավոր ներս հրեցին Փրանսիացուն և դուռը բանալիով փակեցին: Ուշքի գալով, ուսուցիչը տեսավ կապրված արջին: Գաղանն սկսեց փրփրալ, հեռվեց հոտուելով իր հյուրին և հանկարծ կանդնելով հետին թաթերի վրա, հարձակում դործեց... Փրանսիացին չշիռթվեց, միայն ալիքնջին ու կրակեց: Արջը զլորիվեց: Հավաքվեցին բոլորը, զւուը բացվեց, Կիրիլա Գետրովիչը ներս մտավ, դարձանալով իր կատակի վերջավորության վրա:

Կիրիլա Գետրովիչն անպայման բացատրություն եր ուղում, թե Դեֆորժին ո՞վ ե նախազուշացրել կատակի մտսին, վորը թե Դեֆորժին մասին պատահած եր նրա համար, կամ ինչո՞ւ նրա դրպամում լցված ծրագրված եր սական հյուրերից հետո կանչելու: Վերպատու և յեղել: Նա մարդ ուղարկեց Մաշային կանչելու: Վերպատու և յեղել կարցերը թարգմանեց Փրանսիացուն:

— Յետ արջի մասին չեմ լսել, — պատասխանեց Դեֆորժը, — սակայն մոտ միշտ պիտու եմ պահուած, վորովհետեւ մտաւ Կիրիլա վերաբերանք կրել, վորի համար իմ կոչումը թույլ չեմ միիրավորանք կրել, վորի համար իմ կոչումը թույլ չեմ սականչել:

Մաշան ապշած նայեց Դեֆորժին և թարգմանեց նրա իսուքը: Կիրիլա Գետրովիչը վոչինչ չպատասխանեց, հրամայեց վորը: Կիրիլա Գետրովիչը վոչինչ և քերթել նրա կաշին: Հետո դարձավ դեպի դուրս բերել արջին և քերթել նրա կաշին: Հետո դարձավ դեպի սպասավորները և ասաց: — այ քեզ քաջ մարդ, չլախեցավ: Այդ բովելից սկսած նա սիրեց Դեֆորժին ու ել չեր մտածում նրան փորձել:

Այս գեղքն ավելի մեծ տպավորություն թողեց Մարիա Կիրիլովնայի վրա: Նրա յերեւակայությունը բորբոքվեց: Նա տեսրիլովնայի վրա: Նրա յերեւակայությունը բորբոքվեց: Նա տեսնուած եր սատկած արջին և Դեֆորժին, վորը հանդիսատ կանդնած եր արջի մոտ և հանդիսատ խոսում եր իր, — Մաշայի հետ: Եր արջի մոտ և հանդիսատ խոսում եր իր, — Նա տեսավ, վոր քաջությունն ու հալարտ ինքնասիրությունը բացառապես մեկ դասի չեն պատկանուած, և այդ ժամանակից բացառապես տածեց դեպի ուսուցիչն ու ժամ առ ժամ ամսած: Հարդանք տածեց դեպի ուսուցիչն ու ժամ առ ժամ ամսած:

<sup>1</sup> Ա—ր (կրծառված ֆրանսերն առաջարկություն) — պարուն:

վելի ուշադիր դարձավ նրա նկատմամբ։ Յերկուսի միջև վորոշ հարաբերություններ ստեղծվեցին։ Մաշան ուներ հիանալի ժայի և յերաժշտական մեծ ունակություններ։ Դեփորժը հանձն առաջ դասեր տալ նրան։ Այս բոպեյից հետո ընթերցողի համար դժվար չէ հասկանալ, վոր Մաշան սիրահարվեց նրա վրա, նույնիսկ ինքն իրեն չխոստովանելով այդ։

## ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

### ԳԼՈՒԽ IX

Տոնի նախորեյին սկսեցին ժամանել հյուրերը։ Վոմանք կանգ ելին առնում կալվածատիրոջ տանը և նրան կից շենքերում, մյուսները՝ զործակատարի մոտ, վոմանք քահանայի և վոմանք ել ուներ դյուզացիների մոտ։ Ախոռները լիքն ելին յեկվորների ձիերով, բակերն ու մարազները — զանազան կառքերով։ Առավոտյան ժամը 9-ին դողանջեցին պատարագի զանգերը։ Բոլորն շոսպեցին դեպի նոր, քարտչեն յեկեղեցին, վոր կառուցել եր կիրիլա Պետրովիչը, և ամեն տարի դարձարում եր նվերներով։ Պատվորը բարեպաշտների այնպիսի բազմություն հավաքվեց, վոր հասարակ դյուզացիների համար յեկեղեցամ տեղ չեղավ, նրանք կանդնեցին զավթում ու պատերի մոտ։ Պատարագը չեր սկզբում — սպասում ելին կիրիլա Պետրովիչին։ Նա ժամանեց կտօքով, վորին վեց ձի յեր լծած, և Մարիա կիրիլովնայի ուղեցությամբ հանդիսավոր կերպով գնաց իր տեղը։ Տղամարդկանց ու կանանց հայացքներն ուղղվեցին Մաշայի վրա։ Առաջիններն զմայլվում ելին նրա գեղեցկությամբ, յերկրորներն ու շադրությամբ դիտում ելին նրա հագուստը։ Պատարագն սկզբեց, տնային յերդիչները յերդում ելին նախարեմում, կիրիլա Պետրովիչն ինքն ել եր յերդում, աղոթում եր առանց աջի նայելու, և հպարտ խոնակությունը։ Այդ ժամանակ բակը մտավ մի կառք, վորին վեց ձի յեր լծած։

Պատարագը վերջացավ։ Կիրիլա Պետրովիչն առաջինը մոտեցավ բաշխն։ Բոլորը հետեւեցին նրան, հետո մոտեցան հարեւաները՝ նրան հարդանք մասուցելու։ Կանայք շրջապատեցին Մաշային։ Կիրիլա Պետրովիչը, յեկեղեցուց դուրս դարձ, բոլորին

հաշի հրավիրեց իր մոտ, կառք նստեց ու գնաց տուն։ Բոլորի գնացին նրա յետեւից։ Սենյակները լցվում ելին հյուրերով։ Ամեն ըստեւ նոր մարդիկ ելին մտնում ու հաղիկ հասնում մինչև տանտեւը։ Տիկինները նստեցին ծանր ու կիսաշրջանաձև, նըրանք հաղնվել ելին ուշացած մողայով — կիսամաշ, բայց թանգարին զգեստներ, բոլորը զարդարված ելին մարդարիտներով ու արտամանդներով, տղամարդիկ խմբվում ելին խավարի ու ողուականների չուրջը, աղմկալից ու բաղմաձայն խոսում ելին իրար հետ։ Դահլիճում սեղան ելին պատրաստում 80 հոգու համար։ Սպասավորներն իրար ելին անցել, շարում ելին ջերն ու դրաֆինները և հարդարում սփոռոցները։ Վերջապես, ավագ սպասավորն աղղարարեց՝ սեղանը պատրաստ ե, և կիրիլա Պետրովիչն առաջնը գնաց սեղան նստելու, նրանից հետո շարժվեցին տիկիններն ու ծանր բաղմացին իրենց տեղերում, պահպանելով այլապատճեան վորոշ կարգ, որիորդներն իրար խառնվեցին ինչպատճեան վորոշ կարգ, որիորդներն իրար խոնացին իրար մոտ։ Այս այցիների յերիչոտ խումբ և տեղ բռնեցին իրար մոտ։ Տղամարդիկ նստեցին նրանց դիմաց։ Ուսուցիչը նստեց սեղ այլուն, փոքրիկ Սաշայի մոտ։

Սպասավորներն սկսեցին ափսեները մատուցել ըստ աստիճանների, թյուրիմացության դեպքում զեկավարվելով լաֆատեանների, որի յենթադրություններով և համարյա յերբեք չելին սխալվում։ Ափսենների ու գեղանների զնողոցը միախառնվում եր հյուրերի աղմակալից խոսակցություններին, կիրիլա Պետրովիչը հրձվանքով վետում եր իր սեղանը և լիասիրա վայելում աղ ու հայե տեր մարդու յերջանկությունը։ Այդ ժամանակ բակը մտավ մի կառք, վորին վեց ձի յեր լծած։

— Այդ ո՞վ ե, — հարցրեց տանտեւը։

— Անտոն Պաֆնուտյանից, — պատասխանեցին մի քանիսը։

Դուռը բացվեց և ներս մտավ Անտոն Պաֆնուտյանի Սպիցինը, — 50 տարեկան մի տղամարդ, կլոր ու չեչոտ դեմքով, յենը,

1 Լաֆատեր Խոհաննը (1741—1801 թ. թ.): Յյուրիս քաղաքից եր (Շվեյցարիա), «Ֆիլիպոնովիկ» գրքի հեղինակը (1772—78 թ. թ.): Նա (Շվեյցարիա)՝ «Ֆիլիպոնովիկ» գրքի հեղինակը (1772—78 թ. թ.): Նա առաջարկությունն արտահայտվում է նրա կերպարանառում եր, վոր մարդու բազմությունն արտահայտվում է նրա կերպարանառում եր, մասնավոր գերքի վեա։ Այսպիսով լաֆատերի յենթադրություններն այս մասնակում են սպասավորների ձգտում՝ հյուրերի գերքից ճանաչել անշանական դրությունը, ասակիճանը, կոչումը, հարստությունը և նրանց հասարակական դրությունը, ասակիճանը, կոչումը, հարստությունը այլն։

ուակի ծալված կղակով։ Նա բարենց, ժպտաց և արդեն պատրաստվում եր ներողություն խնդրել։

— Այստեղ աման ըերեք, — գոչեց Կիրիլա Պետրովիչը, — համեցեք, համեցեք, Անոռն Պաֆնուտյիչ, նստիր ու ասա ձեզ, այս ի՞նչ է նշանակում։ Պատարագին չեկար, ճաշին ել ուշացար։ Այդ քեզ չի սազում, դու թե բարեպաշտ ես և թե սիրում ես ուսել։

— Ներողություն, — պատասխանեց Անոռն Պաֆնուտյիչը, անձեռոցը կապելով սիսեռագույն բաճկոնի կոճկանցքին, — ներողություն, ճանապարհվեցի ու դեռ տասը վերստ ել չեյի անցել, հանկարծ առջեկ անիվի շնոր յերկու կես յեղավ։ Ի՞նչ արած։ Բարեբախտաբար դյուզը մոտիկ եք։ Մինչեւ հասանք այնտեղ, մինչեւ դարբին դտանք և մի կերպ անիվը սարքեցինք, անցավ ուղիղ յերեք ժամ, ուրիշ հնար չեկար։ Կարծ ճանապարհով՝ կիստենելկայի անտառով դալ յես չհամարձակեցի, այլ յեկա շուրջանակի ճանապարհով։

— Ո՞չո՞՛, — ընդհատեց Կիրիլա Պետրովիչը, — յերեսում ե, վոր դու այնքան ել քաջ չես։ Ինչից ես վախենում։

— Վո՞նց թե ինչից եմ վախենում, հա՛յր Կիրիլա Պետրովիչ, հասա Դուբրովսկի՞ն։ Մեկ ել տեսար ընկար նրա ճանկը նա մի վրիսի, վոչ վոքի չի ինայի, իսկ ինձնից հավանորն յերկու կաշի կքերթի։

— Ինչո՞ւ հատկապես քեզանից, բարեկամու։

— Վո՞նց թե ինչու, հա՛յր Կիրիլա Պետրովիչ, — հանդույցալ Անդրեյ Գալյուրիովիչի դատի համար։ Յես չեյի՛ միթե, վոր ձեզ հածույք պատճառելու, այսինքն խղճով ու արդարացի վարիելու համար վկայեցի, թե Դուբրովսկիները կիստենելկային տիրում են առանց վորեե իրավունքի, միայն ձեր ներողամտության չնորհիվ։ Հանդույցալը (թող նա յերկնային արքայության արժանանա) խոստացավ ինձնից հաշիվ պահանջել, իսկ տղան անշուշտ կկատարի հոր խոսքը։ Մինչեւ հիմա փրկել ե աստված։ ինձնից ընդամենը մի շտեմարան են թալանել. մեկ ել տեսար քթները խոթեցին իմ աղաքակը։

— Իսկ աղաքակում լա՛վ գործ կտեսնեն, — առաջ Կիրիլա Պետրովիչը, — յես կարծում եմ, վոր կարմիր արկղը լեփ-լեցուն ե։

— Վո՞ր բուելից, հա՛յր Կիրիլա Պետրովիչ, լիքն եք, իսկ հիմա դատարկվել ե բոլորովին։

— Հերիք ե սուս ասես, Անոռն Պաֆնուտյիչ։ Քեզ լա՛վ ենք ճանաչում։ Բա ի՞նչ ես անում փողերը։ Տանը խոզավարի յես ապրում, չես ընդունում վոչ վոքի, դյուզացիներիդ կթում ես, փող գիզում, պղծանք-դնաց։

— Դուք ելի բարեհածում եք կատակել, հա՛յր Կիրիլա Պետրովիչը, — ժպտալով մրժմը թաց Անոռն Պաֆնուտյիչը, — իսկ մենք, ասոված վկա, ավերվել ենք, — և Անոռն Պաֆնուտյիչը ձկնակարկանդակի յուղալի կտորի հետ միասին կերակ տանտիւոջ կատակել։

Կիրիլա Պետրովիչը թողեց նրան և դիմեց գավառական նոր վոստիկանասպետին, վոր առաջին անդամ հյուր եր յեկել նրա տումը և նստել սեղանի մյուս ծայրին, ուսուցչի մոտ։

— Հը՛, գոնե գուք կրոնե՞ք Դուբրովսկումն, պ. վոստիկանապետ։

Գառլառական վոստիկանասպետը յերկչուտ կերպով դլուխ տվեց, ժպտաց, կակաղեց ու վերջապես ասաց։

— Կաշխատենք բոնել, ձե՛րդ գերազանցություն։

— Հը՛մ, «լաշխատենք»։ Վաղուց, ինչո՞ւ բոնել Դուբրովսկումն։ Նրա արայ ոգուտ չկա։ Ասենք, ինչո՞ւ բոնել Դուբրովսկումն։ Վազակությունները բարիք են վոստիկանասպետների համար, — ճանապարհորդություններ, քննություններ, կառքեր, իտկ փողը գալիս ե գրապանդ, — ել ինչո՞ւ վորսալ այդ տեսակ բարերարին։ Ճշմարիտ չե՞՞, պ. վոստիկանապետ։

— Կատարելասքն ճշմարիտ ե, ձե՛րդ գերազանցություն, — վաստավախանեց բոլորովին շփոթված վոստիկանապետը։

Հյուրերը քա՞՞հ-քա՞՞հ ծիծառեցին։

— Սիրում եմ անկեղծ մարդուն, — ասաց Կիրիլա Պետրովիչը, — բայց ափսո՞ս հանդուցյալ վոստիկանապետ Տարաս Ալեքսեյեան միջնորդ։ յեթե նա չայրացի, այս վայրեն ավելի խաղաղ կլինեյին։ Վիշը յեթե նա չայրացի, այս վայրեն ավելի խաղաղ կա Դուբրովսկու մասին։ Վերջին անդամ նրան վորտեղ են տեսել։

— Ինձ մոտ, Կիրիլա Պետրովիչ, — ծվծաց կանացի մի հաստ ձայն, — անցած յերեքարթի որը նա ճաշեց ինձ մոտ... Բոլոր հայացքները դարձան դեպի Աննա Ստելլիչնա Գլոբու

վան, վարչ բակական պարզ մի այրի յեր, բալորից սերված՝ իր բարի և սւրախ բնավորության համար։ Բոլորը պատրաստվեցին հետաքրքրությամբ լսելու նրա պատմածը։

— Մի յերեք շաբաթ առաջ յես փող տիֆ գործակատարիս և ուղարկեցի փոստ, վորակեալի փոխադրի Վանյուշիս։ Վորդոս յերես չեմ տալիս, չեմ ել կարող յերես տալ, յեթե նույնիսկ ցանկանամ։ Բայց դուք ինքներդ բարեհաճում եք դիտենալ, գը վարդիայի սպան պետք և արժանավայել ապրի, և յես ինչքան կարող եմ, Վանյուշայիս բաժին եմ հանում իմ փոքրիկ յեկամուսներից։ Յեւ ահա նրան ուղարկեցի 2000 ոռութիւ, թեև Դուքը բովածին մտքից չեր հեռանում։ Մտածեցի, վոր քաղաքը մոտիկ ե, ընդամենը 7 վերստ, Ֆի կերպ կանցին։ Յերեկոյան ի՞նչ եմ տեսնում. գործակատարս յետ ե դալիս վոտով, դումատ, շորերը պատառությած։ Յես ուղղակի հառաջեցի — այդ ի՞նչ ե, քեզ ի՞նչ ե պատահել։ Նա ասում ե — մա՛յր, Աննա Սանիշնա, ավագակներն ինձ կողովստեցին, քիչ մնաց սպանելին։ Դուքը ու ակին ինքն այսուել եր, ուղում եր ինձ կախել, բայց խղճաց և բաց թողեց։ Ամեն ինչ տարավ, թե՛ ձին և թե՛ կառքը։ Յես մեռածի պես եյի. ո՞վ իմ յերկնային թարավոր, հասկա ի՞նչ պիտի անի իմ վանյուշան։ Դե՛ ի՞նչ արած, վորդուս նամակ գրեցի, պատմեցի բոլորը և առանց մի գոռշ փողի որհնությունն ուղարկեցի։

Անյագ մի շաբաթ, յերկու շաբաթ։ Հանկարծ մեր բակն և մտնում մի կառք։ Ինչվոր գեներալ ինդրում և տեսնվել ինձ հետ։ Համեցեք եմ ասում։ Ներս և մտնում 35 տարեկան մի մարդ թիաղեմ, սևահեր, բեներով ու միրուքով, խակ և խակ կույլել։ Ասում ե, թե հանդուցյալ ամուսնուս, իվան Անդրեյիվիչ ընկերն ե, միասին են ծառայել։ Անցնում եր իմ տան մոտից և չեր կարող չտեսնել նրա այրիին, դիտենալով, վոր յես այնուել եմ ապրում։ Յես նրան հյուրասիրեցի ինչով կարող եյի, խոսեցինք գեսից-դենից, վերջապես՝ Դուքը վակուց։ Յես նրան պատմեցի իմ վիշտը։ Գեներալ նոթերը կիտեց։ — Այդ տարո-

րինակ ե, — ասաց նա, — յես լոել եմ, վոր Դուքը վակին հարձակվամ ե վոչ թե ամեն մեկի, այլ հայտնի հարուստների վրա, բայց հենց նրանց ել բաժին և թողնում, ամբողջովին չի կողուսում։ Սպանությունների համար վոչ վոք նրան չի մեղադրում, արդյոք այստեղ չկա՞ վորեն խարեւայություն։ Հրամայեցէք կանչել ձեր գործակատարին։ Գործակատարին կանչեցին ու նա յեկարի ։ Գեներալին տեսավ թե չե, տեղն ու տեղը քարացավ։ «Հապա, բարեկամ, պատմիր տեսնենք Դուքը վակին քեզ վոնց թարանեց և վոնց եր ուղում քեզ կախել։ Գործակատարս դուդուղաց ու ընկալ գեներալի վոտները։ — Հա՛յր, մեղավոր եմ, մեղք գործեցի, սուս ասի։ — «Վոր այդպես ե, — պատասխաննեց գեներալը, — բարեհաճիր պատմել տիկնոջը, թե այդ ի՞նչ պիտուսահց, խել յես կլտեմ։ Գործակատարը չեր կարողանում ուշըի գալ։ «Դե՛հ, — շարունակում եր գեներալը, — պատմիր, — դու վորտեղ ես հանդիպել Դուքը վակուն։ Յերկու սոճիների մոտ, հա՛յր, յերկու սոճիների մոտ։ — «Նա քեզ ի՞նչ ասաց։ — Նա հարցրեց՝ ո՞ւմ սպասավորն ես, ո՞ւր ես գընում, ինչո՞ւ։ — «Լավ, հետո՞»։ — Հետո պահանջեց նամակներն ու վողը։ — «Հետո՞»։ — Նամակներն ու վողը յես տվի նըրան։ — «Իսկ նա՞», հը, ներեցէք։ — «Նա ի՞նչ արեց։ — Նա վողն ու նամակը վերադարձրեց ինձ ու ասաց՝ զնա՞ս բարով, տար փոստը։ — «Հետո՞»։ — Հա՛յր, մեղավոր եմ։ «Յես քո զատաստանը կանեմ, բարեկամ, — սպառնագին ասաց գեներալը, — իսկ դուք, տիկին, հրամայեցէք խուզարկել այս սրիկայի սնդուկը, իրեն ել համձնեցեք ինձ, յես նրան մի լավ զատ կտամ։ Իմացեք, վոր Դուքը վակին ինքը գվարդիայի սպա յե յեղել, նա չի ցանկանա նեղել ընկերոջը։ Յես գլխի եյի ընկերում, թե ով ե նորին գերազանցությունը, ել կարիք չկար յերկար խօսելու։ Կառապանները գործակատարին կապեցին կառքին։ Փողերը գտնիցին։ Գեներալն ինձ մոտ ճաշեց, ապա խուզյն մեկնեց, իր հետ տանելով գործակատարին։ Հետեւյալ ո՞ւ գործակատարիս գտան անտառում, կաղնի ծառին կապած ու մինչև վերջին լաթը պլոկված։

Բոլորը, մանավանդ որիսրդները, լուս լուս եյին Աննա Սանիշնեցի գետամածը։ Որիորդներից շատերը ծածուկ համակրում եյին Դուքը վակուն, համարեկով նրան ոռմանի հերոս, — մանա-

1 Կույլեն Յակով Գետրովիչը (1763—1812 թ. թ.) ռուս դենքական պատմագիր ժամանակ (1808—1809 թ. թ.)։

վանդ Մարիա Կիրիլովնան, մոլի ցնորամիտ այդ աղջիկը, վոր սնվել եր Ռադկլիֆի<sup>1</sup> խորհրդավոր սարսափներով:

— Յեվ դու կարծում ես, Աննա՛ Սավիչնա, վոր քեզ մոտ յեղել ե ինքը, Դուքրովսկի<sup>2</sup>ն, — Հարցրեց Կիրիլա Պետրովիչը, — շատ ու շատ սիալվել ես: Զգիտեմ թե ով ե քեզ մոտ հյուր յեղել, միայն թե վոչ Դուքրովսկին:

— Վո՞նց թե Դուքրովսկին չի յեղել, հա՛յր, նրանից բացի ել ո՞վ դուրս կդա ճանապարհ, անցողներին կկանգնեցնի ու կխոզարկի:

— Զգիտեմ, միայն թե այդ Դուքրովսկին չի յեղել: Յես նրան հիշում եմ, յերբ դեռ յերեխա յեր, չգիտեմ նրա մաղերը սեացել են, թե ինչ, իսկ այս ժամանակ նա գանդրահեր, շիկամաղ տղա յեր: Հաստատ դիտեմ, վոր Դուքրովսկին հինդ տարով մեծ ե իմ Մաշայից, ուրեմն հիմտ նա վոչ թե 35, այլ մոտ 23 տարեկան է:

— Ճիշտ այդպես ե, ձերդ դերագանցություն, — ասաց վոստիկանապեր, — իմ գրանում կամ Վլադիմիր Դուքրովսկուն նշանները: Դրանք ասում են, վոր նա 23 տարեկան է:

— Հը, — ասաց Կիրիլա Պետրովիչը, — կարգացեք, իսկ մենք կլսենք: Վաստ չի լինի, վոր մենք իմանանք նրա նշանները: Դուցե հանդիպի ու ել չպրծնի մեր ձեռից:

Վոստիկանապետը գրանից հանեց բավականաչափ խղզած մի թուղթ, ծանրակշիռ կերպով բացեց և ակաց կարգալ յերդի առողմանությամբ:

«Վլադիմիր Դուքրովսկուն նշանները, վորոնք կաղմած են նրա նախկին սպասավորների պատմածների հիման վրա:

«22 տարեկան, միջահասակ, դեմքը մաքուր, միրուքը խուզում ե, աչերը շագանակագույն, մազերը չեկ, քիրը ուղիղ: Առանձին նշաններ. այդպիսիք չկան»:

— Միայն այդքա՞ն, — Հարցրեց Կիրիլա Պետրովիչը:

— Այսքան, — պատասխանեց վոստիկանապետը, ծալելով թուղթը:

<sup>1</sup> Ռաֆիլիֆ Աննա (1764—1823) — անդիացի կին-գրող ե, գրել ե արկածային վեպեր, վորոնք մի յեն գաղտնիքներով ու սարսափներով քողարկված չարագործություններով, տեսիլներով, խորհրդավոր ձեռագրերով և այլն: Այստեղ Պուշկինը նկատի ունի Ռաֆիլիֆի վեպերի հենց արանձնահատությունը:

— Շնորհավորում եմ, ու վոստիկանապետ: Ամա թուղթ ե հա՞: Այլ նշաններով ձեզ համար դժվար չի լինի գտնել Դուքրովսկում: Լավ, քի՞չ են այնպիսիները, վորոնք միջահասակ են, չեկ մաղերով, ուղիղ քթով, շաղանակագույն աչքերով: Գրադ կդամ, վոր յերեք ժամ կլսունես հենց Դուքրովսկու հետ, և զմի չես ընկնի, թե ում հետ գործ ունես: Խոսք չլա՝ խելացի՛ ծառայողներ եք:

Գալաքական վոստիկանապետը շփոթվեց, թուղթը դրեց դրախտնը և լռելլայն սկսեց ուտել կաղամբով համեմած սապը: Մինչ այս մինչ այս, սպասավորներն արգեն մի քանի անգամ մոտեցան հյուրերին ու լցրին նրանց բաժակները: Լեռնային և ցիմլյանակուր<sup>2</sup> դինու մի քանի շեր բացվեցին և հաճույքով ընդունվեցին իբրև շամպայն, դեմքերն սկսեցին կարմրել, խոսակցությունները դառնությ ելին աղմկալից, անկապ և ուրախ:

— Չե՛, — շարունակեց Կիրիլա Պետրովիչը, — ել մենք չենք տեսնի այնպիսի վոստիկանապետ, ինչպես հանգուցյալ Տարաս Ալեքսեևիչն եք: Նա չեր վրիսում, բացրելան չեր: Ավասոս վոր Ալեքսեևիչն եք: Նա չեր ամբողջ ավազակախմբից վոչ մեկը չեր պրծնի նրա ձեռքից: Նա բոլորին ել կըսոներ: Ինքը՝ Դուքրովսկին ել չեր աղամբի, նրա տալիք փրկանքն ել չեր ողնի: Տարաս Ալեքսեևիչ աղամբի, նրա աղամբի փրկանքն ել չեր ողնի: Տարաս նրան ել բաց չեր ը նրանից փողը վերցնելը կվերցներ, բաց նրան ել բաց չեր թողնի: Այդպես եք հանգուցյալի սովորությունը: Ի՞նչ արած, թողնի: Այդպես եք հանգուցյալի սովորությունը: Ի՞նչ արած, թողնից յերեսում ե, վոր յե՛ս պիտի անցնեմ այդ գործին, մեր բանից յերեսում ե, այս իրավունքը պահպանությունը ունի: Առաջին հերթին տանեցիների հետ զնամ ավազակների ունի: Առաջին հերթին կտանեմ մի քանի հողի. նրանք անտառը կմաքրեն գողերից: Վախկուս մարդիկ չեն, ամեն մեկը միայնակ արջի գեմ և զնում: Վաղակներից յետ չի փափած:

— Չեր արջն առողջ ե, հա՛յր Կիրիլա Պետրովիչ, — ասաց Աննան Պաֆնուտյանը, այս խոսքերի վրա հիշելով իբրև ծանոթ արջին և մի քանի կատակներ, վորոնց մի ժամանակ ինքն ել եր զոհ զնացել:

— Միշան<sup>3</sup> դնաց մեղանից, — պատասխանեց Կիրիլա Պետրո-

<sup>1</sup> Լենային գինի-կովկասյան գինի:

<sup>2</sup> Ցիմլյանկուր գինին կարմիր գինի յե, արտադրվում և Աղով-Սկծով վան յերկրամասի Դոնի մարզի համանուն գյուղում:

<sup>3</sup> Միշա — արջը:

պիչք, — մեռա՛վ պանծալի՛ մահով, ընկա՛վ թշնամու ձեռքից : Հրե՛ն նրան հաղթողը, — կիրիլա Պետրովիչը ցույց տվեց Դեֆորժին : — Լա՛վ նայիր իմ Փրանսիացու կերպարանքին : Նա քեզ համար վիճակ լուծեց, հիշո՞ւմ եա քեզ հետ պատահած դեպքը :

— Վո՞նց չհիշեմ, — ասաց Անտոն Պաֆնուտիչը գլուխը քորելով, — շատ լավ եմ հիշում : Ուրեմն Միշան մեռա՛վ, ավասոս, հազար ամսասոս, ի՞նչ զիարդալին եր, ինչքա՞ն իմելացի : Նրա պես արջ չետ գտնի : Ինչո՞ւ մուսյոնն նրան սպանեց :

Կիրիլա Պետրովիչը մեծ բավականությամբ սկսեց պատմել իր Փրանսիացու քաջազործությունը, հարկավ, նա ընդունակ եր պարծենալու այս ամենով, ինչ վոր շրջապատում եր նրան : Հյուրն ուշադրությամբ լուսւմ ելին Միշայի մահվան պատմությունը և դարձացած նայում Դեֆորժին, վորն ուշադրություն չըդարձնելով իր քաջազործության վերաբերող խոսքերին, հանդիսանուած եր իր տեղում և բարոյական նկատողություններ եր առում իր կայտառ սանին :

Յերեք ժամ տեսող ձաշը վերջացավ : Տանտերն անձեռնոցիկը որեց սեղանին : Բոլորը վեր կացան ու գնացին հյուրասենյակը, վորտեղ նրանց սպասում եր սուրճը, թղթախաղը, և վորտեղ նրանք պիտի շարունակելին սեղանատանն այնքա՞ն լավ սկսած քեփը :

## ԳԼՈՒԽ X

Յերեկոյան ժամը մոտ վեցին մի քանի հյուրեր ուղարկ ուղարկ ելին վնալ, բայց տանտերը, վոր տաքացել եր փոմնջ խմելուց, հրամայեց փակել դարպաները և հայտարարեց, թե մինչև առավոտ վոյչ դուրս չի թողնի : Շուտով թնդաց յերաժշտությունը, սրահիմի գոները բացվեցին և սկսվեց պարտհանդեսը : Տանտերն ու իր մոտիկները նստել ելին անկյունում, քամելով բաժակ բաժակի յանելից և դիտելով ուրախ յերիտասարդությանը : Պառավները թուղթ ելին խաղում : Կավալերներն ավելի քիչ ելին, քան կանայք, ինչպես ամեն տեղ, ուր չի գտնվում ուլունների<sup>2</sup> վորեւ բրիդարությանը : Բոլոր տղամարդիկ, վորոնք դրա համար պետքական

1 Մուսյո (Փրանտերին) — պարոն :

2 Ռուսներ — տղամարդ թեթև հեծելազորի մի ամսական :

ելին, ոգոսագործվեցին : Ռասուցիչը բոլորի մեջ աչքի յեր ընկերում, առմենից շատ նա յեր պարում, բոլոր որիորդները նրան հրամայեցում ելին պարելու և գտնում ելին, վոր նրա հետ շատ լավ և վայլո պարելը : Նա մի քանի անդամ պատվեց Մարիա Կիրիլովնայի հետ, և որիորդները հեղնանքով խօսում ելին նրանց մասին : Վերջապես, զիշերվա կեսին հունած տանտերը պարերը դարձարեցրեց, հրամայեց ընթրիք տալ, իսկ ինքը դնաց քնելու :

Կիրիլա Պետրովիչը բացակայությամբ բոլորն իրենց ամենի աղասու և ուրախ զգացին : Կավալերները հանդինեցին նստել ախկիների կողքին : Աղջիկները ծիծաղում ելին ու վախուսում իրենց հարկաների հետ : Տիկինները բարձր խոսում ելին սեղանի մյուս կողմում գտնվողների հետ : Տղամարդիկ խմում ելին, միմում և քահ-քահա՛ ծիծաղում : Մի խոսքով՝ ընթրիքը շատ ուրախ անցավ և խիստ համելի հուշեր թողեց :

Միայն մի մարդ չեր մասնակցում ընդհանուր ուրախության, — Անտոն Պաֆնուտիչը լուր ու մոայլ նստած եր իր տեսքում, ուստում եր կարծես դժկամ և չափազանց անհանդիսու եր զուարկում : Ավազակների վերաբերյալ խոսակցությունները փոթորկել ելին նրա յերեակայությունը : Մենք չուտուլ կտեսնենք, վոր նա բավականաշատի հիմք ունեն վախենալու :

Անտոն Պաֆնուտիչը, վոր ասածով եր յերգվում, թե իր կարմիր արկղիկը դատարկ է, չեր ստում, մեղք չեր գործում, — կարմիր արկղիկն իրոք վոր դատարկ եր : Մի ժամանակ այնտեղ կարմիր արկղիկն իրոք վոր դատարկ եր : Միայն այս նախազգուշությամբ եր կրծքի վրա, շատկի տակ : Միայն այս նախազգուշությունը եր, վոր նա մեղմեց բոլորի նկատմամբ իր ունեցած անվստահությունն ու մշտական յերկյուղը : Մտիւլած մինելով գիշերել ուրիշ տանը, նա վախենում եր, թե իրեն կտեսակորնեն վորեւ առիշտ տանը և սեղանի սենյակում, ուր հեշտությամբ կարող են գողեր մըտանձնակի սենյակում, ուր հեշտությամբ կարող են վերջապես, ընտրեց Դենել : Նա հուսալի ընկեր եր վինտում և վերջապես, ընտրեց Ֆորժին : Այս ընտրությանը նախատեսցին՝ Դեֆորժի արտաքինը, վոր ուժի նշաններ ուներ, մանավանդ նրա ցույց տված քաջությունն արջի նկատմամբ, վորին խեղճ Անտոն Պաֆնուտիչն տանց ցնցվելու չեր կարող հիշել : Յերեք սեղանից վեր կացան, Անտոն Պաֆնուտիչն սկսեց պատվել յերիտասարդ Փրանտերություն, գոտի հաղանդ և ամսականի մի վերջո, զիմեց նրան . . .

— Ը՞մ, զ՞մ, մույս՝, չի՞ կարելի արդյոք գիշերեւ ձեր խցիւկում, վրասպնակու գիտե՞ք ինչ…

— Que de'sire, monsieur<sup>1</sup>, — Հարցրեց ԴԵՊՈՒԹՅ, քաղաքականի գլուխ սայսի նրան:

— Ախոռ'ս, մուսյո, վոր ոռաւերեն դեռ չես սովորել: Ժիկե, մոսա, չե վու կուցե՞՞ս, հասկան՞մ ես, թե չե:

Անտոն Պաֆնուտյիչը, խիստ բավական լինելով իր Փրանսերենի գիտենայուց, իմակունի գնադ կարգադրություն անելու:

Հյուրերն մկնեցին մեկ մեկու հրաժեշտ տալ, և ամեն մեկը գնաց իրեն հատկացված աենյալը : Անտոն Պաֆնուտյիչն ուսուցչի հետ գնաց տան կեց շենքը : Մութ գիշեր եր : Դեփորժը լապտերով լրացալուրում եր ճանապարհը, Անտոն Պաֆնուտյիչը բավական զլարժ հետեւում եր նրան, յերեսն կրծքին սեղմելով թագ-ցրած դուռմարը, վարպետի հավաստիանար, թե իր մոտ են փողեր :

Համան տան կից չենքը, ուսուցիչը մոմը վառեց և յերկուսն ել սկսեցին հանվել։ Մինչ այդ՝ Անտոն Պաֆնուտիիչը մի փոքր քայլեց սենյակում, զբարելով կողմեքն ու լուսամուտները և կասկածածությամբ որորելով գլուխը։ Դուռը փակվում եր մի սողնակով, լուսամուտները կրկնակի շրջանակներ դեռ չունեյին։ Նա փորձեց այդ մասին գանգոսուին, Դեփորժին, բայց իր գիտեցած Փրամուերեն լեզում շատ տաշմանափակ եր այդպիսի բարդ բացատրության համար։ Ֆրանսիացին նրան չհասկացավ և Անտոն Պաֆնուտիչն ստիպված եր թողնել իր գանգատները։ Նրանց անկողինները դեմուղեմ եյին, յերկուսն ել պառկեցին, և ուսուցիչը հանգցրեց մոմը։

— Պուրկուա վու տուշե, այսւոկուա վու տուշե<sup>4</sup> — սուչե

<sup>1</sup> Que désire, monsieur — *ի՞նչ էք սահմանում, սապառ?*

<sup>2</sup> ԺԵ ՎԵ, ՏՈՒՄ, ՀԵ ՎԵ ԼՈՒՅԵՐԵՐԵՆ, (ՓՐԱԽԱԵՐԵՆ) — յես ուզում եմ ձեզ մոռ  
քննել :

**3** Monsieur, très volontiers, venillez donner des ordres en conséquence—  
—*Արքայինթյամբ, պարսն, բարեի լեղեկ կարդաբռություն անեւ:*

<sup>4</sup> Պարկուա վու (Փրանսերէն) —ինչո՞ւ դուք, տաշե առևական «ԵՍԻՏԵՐ» (Հանգչնել) բայը, վորը վախցած Անան Պաֆնությէն աղճատել և Փրանսերէն ձեալ:

Անտոն Պավելուտիչիչը՝ ոռուսական դպրության մի կերպ խոնարհելով՝ քրանչախուզական ձևով, — յես խապարում դուրսիր՝ չեմ կառող :

Դեֆորմէլ չհասկացավ նրա բացականչությունը և բարի դե-  
չեր մաղթեց նրան:

— Այս դուք անիծված անորեն, — մըթմրթաց Սպիցինը, վա-  
թաթվելով վերտակով, — ինչի՞դ եր պետք հանգնել մռմը։ Զե՞  
վոր քեզ համար ել ե վատ։ Յես առանց լույսի չեմ կարող քննել։  
— Մուսյո՛, մուսյո, — շաբունակեց նա, — ժե վե ավեկ վու ոլար-  
լէ՛ : — Սակայն Փրանսիացին չպատասխանեց և շուտով սկսեց  
խոճիւլ :

«Խոմքում և Փրանտիացի Հայլանը, — մտածեց Անտոն Պափ-  
նուտյանը, — իսկ յես աչքերս ել չեմ ուզում փակել: Մեկ ել տե-  
սար գողերը ներս մտան գոնից կամ լուսամուտից և այդ անտ-  
առնեն թնառնոթի վորոտով ել չես կարթեցնի»:

— Այսպէս, ա՛ մուսլիմ, ստունան քեզ տանի:

Անտոն Պաֆնուտիյիջ լրեց, — Հոգնածությունն ու գինին հետո կապահածությունը նրա յերկյուղը։ Նա սկսեց ննջել և շուտում խոս ոռւն մտավ։

Նա պետք է արթնանալ տարուինակ կերպով։ Քնի մեջ զդում  
եր, վոր մեկը կամացումկ քաշում է իր շապկի ոճիքից։ Անտոն  
Պաֆնուտյիչն աչքերը բացեց և աշնանային տուավոսվա դժգույն  
լույսի տակ իր առաջ տեսավ Դեփորժին։ Ֆրանսիացին մի ձեռ-  
քում բռնել եր գրպանի պիտուլը, իսկ մյուս ձեռքով հանում եր  
ներկայական ուսմասով։ Անտոն Պաֆնուտյիչը քարացավ։

— Արքական գույնը՝  
— կես կես մեր, մոռայո, կես կես սե՞՝, — արտասանեց նա դող-  
դոջումն ձախով:

— Առաջ, լսել, — պատասխանեց ուսուցիչը մաքուր ոռւսեցածությունը՝ լսել, կամ դուք կորած եք։ Ես Դուքքով սկզբն եմ։

1 Պարմիք (Փրամամբելն) — քնիլ

<sup>2</sup> ԺԵ ՎԵ ԱՎԵԼԻ ՎՈՒ ՊարլԵ (ՔՐԱՍՏԱՐԵՆ) — յան աշխատ աւ

Քոնսել :  
Տ կըս կըս սե, մուսյո, կըս կըս սե (Քըանութելն) —այս ի՞նչ և նշանակում,  
աղառողն, պէտ ի՞նչ ե :

Հիմա խնդրում ենք ընթերցողին թույլ տալ, վոր մեր վիպակի վերջին դեպքը բացատրենք նախընթաց հանդամանքներով, վոր մենք դեռ չենք պատուել:

\*\* Կայարանում, կայարանապետի (վորին մենք հիշել ենք) տանը, անկյունում նստած եր մի ճանապարհորդ: Նրա համեստ արտաքինն ու անդորրությունը ցույց եցն տալիս, վոր նա ուղիղութին եւ կամ ոտարերկրացի, այսինքն մի մարդ, վորը ձայն չունի փոստային կայարանում<sup>2</sup>: Նրա կառքը կանոնած եր բակում, սպասելով անիվները յուղելուն: Կառքի մեջ կար մի փոքրիկ պայտապակ, — վոչ բավականաշատի կարողության սերծախոս ապացույցը: Ճանապարհորդը վոչ թեյ պահանջեց, վոչ սուրճ, լուսամուտից գուրս եր նայում ու սուրճ, մի բան, վոր բոլորովին գուր չեր գալիս կայարանապետի կնոջը, վորը նստել եր միջապատի մյուս կողմում:

— Վոր սատանան ե ուղարկել այս սուլողին, — կամացուկ ասաց կինը, — սուրճ ե հա սուրճ, ամիջամածն ուղղակի զահը տարավ:

— Ի՞նչ կա վոր, — ասաց կայարանապետը, — թող վոր սուլի:

— Վո՞նց թե «ինչ կա վոր», — առարկեց բարկացած կինը, — մի՞թե չգիտես, թե այդ ինչ նշան ե:

— Փող թույնելու նշան, ե՛ւ, Պախոմովինա, թող սուլի ինչքան ուղենա: մինույն ե, մենք վող չունենք:

— Թո՞ղ գնա, Սիրոբուիչ: Ինչո՞ւ յես պահում նրան: Կա՛ռք տուր, թող ջհանդամը գնա:

1 Բազմոչին—«զանազան դիրք և աստիճան ունեցող մարդեկ»—XIX դարի 40-ական և 60-ական թվականներին առաջացած հասարակական միջնակերտ բարկացած ժանր աստիճանավորության, սորդին հոգեսրականության, վաճառականության, քաղքենության վտարանդիներից: Դեպի ճորտատիրական կարգերը թշնամաբար արամադրված ուղնուխները հանդիսանում եյին այն ժամանակվա հասարակության առաջավոր, լիբերալ-դեմոկրատական խավը, իսկ ուղղոչիների առանձին, առավել առաջավոր ներկայացուցիչները նույն նիսկ հեղափոխական ու սոցիալիստական գաղափարներ եյին քարոզում:

2 Զայն չունի փառային կայարանում, այսինքն փոստային ճանապարհի կայարանում չի կարող շտապ կառք պահանջել: Կառքը սովորաբար բավար կան չեյին լինում և այս պատճառով վեճեր եյին լինում ճանապարհորդների ու կայարանապետի մեջ:

— Դեռ կսպասի, Պախոմովինա: Ախուսում ընդամենը իննը ձի կա, յերեքն ել հանգստանում են: Մեկ ել տեսար լավ ճանապարհորդներ յեկան, արի ու պատասխան տուր Փրանտիացու: Համար: Ուհո՛, արուեն գալիք են: Յեկ ինչքա՞ն արագ: Արդյոք գեներալ չե՞:

Մի կառք կանդնեց դժուամ: Սպասավորն իջավ, բայց գըոնակը և մի բոպեյից հետո ուղղմական գրատով ու սպիտակ գըլիարկով մի յերիտասարդ մտալ կայարանապետի մոտ: Սպասավորը ներս տարավ արկղիկը և դրեց լուսամուտին:

— Կա՛ռք, — հրամայական ձայնով ասաց սպան:

— Այս բոպեյիս, — պատասխանեց կայարանապետը: — Անդը մտաք ուղեգիրը:

— Յես ուղեգիր չունեմ: Յես ուրիշ կողմ եմ զնում... մի՞թե չես ճանաչում ինձ:

Կայարանապետը դես ու դեն ընկավ, շտապեցրեց կառապան-ներին: Յերիտասարդն սկսեց յետ ու առաջ քայլել սենյակում, անցյալ միջապատի մյուս կողմը և կամացուկ հարցրեց կայարանապետի կնոջը, թե ո՞վ ե ճանապարհորդը:

— Աստված գիտե, — պատասխանեց կինը, — ինչ վոր Փրանտիացի: Հինդ ժամ ե, ինչ կառքի յե սպասում ու սուրճ: Անիծվածն ուղղակի զահը տարավ:

Յերիտասարդն սկսեց Փրանտերեն խոսել ճանապարհորդի հետ:

— Ո՞ւր եք բարեհամառ դնաւ, — հարցրեց նրան:

— Մոտակա քաղաքը, — պատասխանեց Փրանտիացին, — այն տեղից մեկնելու յեմ մի կալվածատիրոջ մոտ, վորն առանց ինձ տեսնելու ուսուցիչ և վարձել: Յես կարծում եյի, թե այսոր տեղ կհանեմ, բայց պ. կայարանապետը կարծեմ այլ կերպ և դահանեմ, բայց պ. կայարանապետը ձի գտնելը դժվար ե, պ. սպան:

— Այստեղի կալվածատիրերից վորի՝ մոտ եք զնում իբրև ուսուցիչ, — հարցրեց սպան:

— Պ. Տրոյեկուրովի մոտ, — պատասխանեց Փրանտիացին:

— Տրոյեկուրովի մոտ: Ո՞վ ե այդ Տրոյեկուրովը:

1 Աւեգիր—փոստային կառքով մեկնող պետք և ստանար ուղեգիր, վոր նշանակում եր մարզում, ճանապարհորդի պաշտոնն ու աղքանակը:

— Ma foi, monsieur<sup>1</sup>... յես այնքան ել լավ բան չեմ լսել  
նրա մասին։ Պատմում են, վոր նա դուռզ ու քմահաճ աղջ յե,  
կոպիա և վարչլում իր տնեցիների հետ, վոչ-վոք չի կարող նրա  
մոտ ապրել, վոր բոլորը դողում են նրա անունը լսելիս, ուսու-  
ցիչների հետ (avec les outchitels) դաժան և վարչլում և արդեն  
մահացաւ թակել ե յերկուսին։

— Թույլ տալեք. և դուք վորոշել եք աշխատե՞լ այլպիսի հընէշի մոտ :

— Ի՞նչ անեմ, պլ. սպա: Նա ինձ առաջարկում և լավ ոռ-  
ձիկ, — տարեկան 3000 ռուբլի և ամեն ինչ, — ընակարան, ճաշ,  
ընթրիք, նախաճաշ և այլն: Գուցե յես ուրիշներից ավելի յեր-  
ջանիկ լինեմ: Յես պառավ մայր ունեմ, ոսճիկիս կեսը կուզար-  
կեմ նրան, մնացած փողերից հինգ տարովա ընթացքում կարող եմ  
հավաքել մի փոքրիկ կապիտալ, վորը բավական կլինի ապագա-  
յում անկախ ժարդ դառնալու համար, — և այն ժամանակ հօն-  
Տօր<sup>2</sup>, կդնամ Փարիզ և առևտրական դործ կակասմ:

— § լոյիկուրովի տանը ձեզ վորեւ մէկը ճանաչում է, —  
Հարցրեց նա:

— Վո՞չ վոք, — այստասխանեց ուսուցիչը, — Տրյեկուրովն  
ինձ Մոակվայից հրավիրել եիր ընկերներից մեկի միջոցով, վորի  
խուարագն իմ հայրենակիցն եւ և ինձ հանձնարարել ե։ Դուք  
պետք եւ իմանաք, վոր յես պատրաստվում եյի վոչ թե ուսու-  
ցիչ, այլ հրուշակագործ լինելու, բայց ինձ ասացին, վոր ձեր  
իրերում ուսուցչի կոչումը շատ ալելի ձեռնտու յէ։

Սպան մտածում եր :  
— Լսեք, — ընդհատեց նա Փրանսիացուն, — Ի՞նչ կառելիք,  
յեթե ձեր այդ ապագայի վոխարեն ձեզ առաջարկեցին 10000  
ռուբլի գուտ վող, այն պայմանով, վոր ինկույն Փարիզ մեկ-  
նելիք :

მერანიაშვილი კარმარაძ ნახევ սაჭალი, ძალაშვილი უ იროვნება  
ასეთს:

— Կառքը պատրաստ է, — ներս ժանելով ասաց կայարանապետ :

Նույնը հայտնեց և սպասավորը:

— Իսկույն, — պատասխանեց սպան, — մի բողեյով դուրս  
յեկիք: — Կայարանապետն ու սպասալորը դուրս յեկան: — Յես  
կատակ չեմ անում, — շարունակեց նա Փրանսերեն, — 10000-ը  
յես կարող եմ ձեզ տալ, ինձ միայն հարկալոր են ձեր բացակա-  
յությունն ու ձեր թղթերը:

Այս խոսքերի վրա նա բացեց արկղին ու հանեց թղթադրամ-ների մի քանի կտառոց :

Յրանսիադին յերկու աչքը չորս արեց։ Նա չդիտեր ինչ անել։

— Իմ բացակայությունը... լմ թղթերը, — կրկնեց նա ապ-  
շած, — ահա լմ թղթերը: Բայց դուք կատակ եք անում: Զեր ին-  
չի՞ն են պետք լմ թղթերը:

— Այլ ձեր դուրսը չէ: Յես հարցնում եմ, համաձայն ի՞ն եք,  
թէ վուս:

Գրանտիացին, դեռ չհավատալով իր ականչներին, փառատա-  
թղթերը սպազ յերիտասարդ սովային, վորոն արագությամբ նայեց  
այլ փառատաթղթերը :

— Զեր անցագիրը . . . լավ . . . յերաշտակորության առաջը . . .  
հըմ . . . ծննդյան վկայական, — շատ գեղեցիկ: Ահա ձեր փողերը,  
վերաբարձեր: Գնա՞ք բարով:

Քրանովացին կանոնել եր քարացած :

— Ապան յետ յբկակ: Տվել ինձ աղնիով խոսք, վոր  
առ առարկ մեր մեջ կմնար, ձեր աղնիով խոսքը:

— Աղնիվ խոսք եմ տալիս, — պատրասխանեց Փրանսիացին, —  
առաջ եմ թոթեառ... առանց այդ թղթերի ի՞նչ անեմ :

— Հենց առաջին քաղաքում հայութաբարեք, թէ Դուքրովմիլին  
թալանել ե ձեզ: Կհավատան և կտան անհրաժեշտ վկայականնե-  
րը: Դնա՞ք բարով, աստված տա, վոր չուտ հասնեք Փարիզ և ա-  
ռողջ գտնեք ձեր մորը:

Դուբրովկին դուրս յեկալ սեսյալըց, պառքը սամաց ալացակ. կայարանապետը նայեց լուսամուտից, և յերբ կառքը հեռա-

— Պատոմութեան, պիտես ի՞նչ. այդ Դուքը ըստ կենաց է:

կինը հապճեալ նետվեց դեպի լուսառութը, բայց արթու ուշ  
եր: Դուքրովսկին արդեն հեռու յեր: Կինն սկսեց կշտամբել ա-  
մուսնում:

— Աստված չունե՞ս, Սիրոբովի՛չ, ինչո՞ւ առաջ չտակիր լին

<sup>1</sup> Ma foi, monsieur —պնիկ խոսք, պարո՞ն :

<sup>2</sup> Bonsoir — мишикъ

այլ, գոնե կտեսնելի Դուբրովակովն: Իսկ հիմա սպասիր, վոր նա նորից դա: Անխիղճ ես զու, անխիղճ:

Ֆրանսիացին կանգնած եր քարոզածի պես։ Սպայի հետ կապած պայմանը, փողը, — ամեն ինչ յերազ եր թվում նրան։ Սակայն թղթադրամների կատոցները նրա գրապահում եյին և պերճախոս կերպով հաստատում եյին դարձանալի իրականությունը։

Նա վորոշեց կառք վարձել մինչև քաղաքը՝ Կառապանը դանդաղ քայլ քշում եր կառքը և դիշերը հասան քաղաքը:

Դեռ ուղեկալին չհասած<sup>1</sup>, վորտեղ պահակի փոխարեն կանգ-նել եր խարխլած, վորքիկ պահակատունը, Փրանտիացին կա-ռապանին հրամայեց կանգ առնել, իջավ կառքից և շարժնակեց վոտքով դնալ, կառապանին նշաններով բացատրելով, վոր կառքն ու պայտապակը նվիրում է նրան։ Կառապանն ել նրա առատա-ձեռնության վրա դարձացավ ճիշտ այնպես, ինչպես Փրանտիա-ցին Դուքրովսկու առաջարկից։ Սակայն յեղակացնելով, վոր դերմանացին<sup>2</sup> ինը ազարտվել է, կառապանը ջերմեռանդությամբ դլուխը խոնարհելով չնորդակալություն հայտնեց նրան և քա-ղաք մտնելը համարելով անսպատակահարմար, ուղեորդեց իրեն հայտնի զվարձատունը, վորի տեսը նրան շատ լավ ծանոթ եր։ Այստեղ նա անցկացրեց ամբողջ դիշերը, իսկ հետեւալ առավո-տյան յերեք ձին առած, առանց նվեր ստացած կառքի ու պա-յուսակի վերադարձավ տուն։ Նրա դեմքն ուռած եր, աչքերը կարմրել ելին։

Տիրանալով Փրամսիացու վրաստաթղթերին, Դուքքովսկին ինչպես գիտենք, համարձակ ներկայացավ Տբոյեկուրովին և տեղադրովեց նրա տանը։ Ինչպիսի ծածուկ զիտավորություններ ելուննապ (մենք գրանք հետո կիմանանք), նրա վարքը միանդամայն անաղարտ էր։ Ճիշտ և, նաև քիչ եր զրադշում փոքրիկ Սաշյի դաստիարակությամբ, լիակատար աղատություն եք տալիս նրա ջարանցություննելին, դատերի համար պահանջկոտ ու խիստ

Հ Առանց ուղեգիրի չեր կարելիք քաղաքի սահմաններից, ուղեկալից դուրս դնալ: Ուղեկալիք մոտ պահակապես սպան հատուել ցուցակներում զրանցում եր կառօղջ դնացող ճանապարհորդներին: Միայն ուղեգիրն ստուգելուց հետո բարձրացնում ելին ճանապարհը փակող զերանը և ճանապարհորդիք կառըր դուրս եր գալիս քաղաքի:

<sup>2</sup> Այս ժամանակ «Հասարակ» ժողովուրդը բոլոր սահմելութեացիներին զերմանացի բեր անվանում :

չեր, իսկ այդ գասերը նա լոկ ձետի կանության համար եր տա-  
լիս, —բայց մեծ ջանասիրությամբ հետեւամ եր իր աշակերտու-  
հու յիրած շտական առաջարկմության, հաճախ նրա հետ ժամե-  
րով նստում եր գաշնամուրի մոտ: Բոլորը սիրում ենին յերիստա-  
սարդ ուսուցչին, —կիրիլա Պետրովիչը—վորսի ժամանակ նրա  
ցույց տված խիդախ ճարպկության համար, Մարիա Կիրիլով-  
նան—անստհման ջանասիրության, համեստ և ուշադիր վերաբեր-  
մունքի համար, —Մաշնաւղեպի իր չարությունները ներողամիտ  
լինելու համար, տանեցիք — բարության և առատաձեռնության  
համար, վորը լսու յերկույթին չեր համարատասխանում նրա  
կարողության: Նու ինքը կարծես սերտ կարված եր ամբողջ ըն-  
տանիւնն և ինեն արդեն համարում եր նրա անդամը:

Աւագուցչական կոչում ստանձնելուց մինչև մեղ լավ հայտնի  
սովորականացնելու անցել եր մոտ մի ամիս և վոչոքի ժողով  
չեր անցնում, վոր համեստ, յերիտասարդ Փրանսիացու դիմակի  
տակ թագնախած և ահարիկու մի ավագակ, վորի անունը սարսափի  
տարածում շրջակա՝ բոլոր սեփականատերերի վրա։ Այդ ամ-  
եր տարածում շրջակա՝ բոլոր սեփականատերերի վրա։ Այդ ամ-  
բուղ ժամանակ Դուքը պահպան չեր հեռանում Պոկրովսկուց, սա-  
խող ժամանակ Դուքը պահպան չեր յերևակայության չնորհիվ նրա  
կայն գյուղի բնակիչների վառ յերևակայության չնորհիվ նրա  
ավագակությունների լուրը շաբունակում եր տարածվել, թե՛ն  
կարող եր պատահէել, վոր նրա հրոսակախումբն իր պետի բացա-  
կարող կայսեր պատահէել, վոր նրա հրոսակախումբն իր պարհ

